

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

FREEDOM OF INFORMATION CENTER OF ARMENIA

**ԴՈՒ ՏԵՂՅԱԿ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՍ
YOU HAVE A RIGHT TO KNOW**

տ ե ղ ե կ ա գ ի ր / b u l l e t i n N 4 0

ա պ ռ ի լ / a p r i l 2 0 1 3

Հրատարակվում է 2001 թվականից/ Published since 2001

www.foi.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ/CONTENT

ՏԱ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ԻԱԿ-ը դատի է տվել Ազգային ժողովին.....	5
Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան պարտավոր է պատասխանել 5 օրում.....	6
ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ ԿԱ Ազգային անվտանգության ծառայության.....	6
Վարչական դատարանը նմանատիպ գործերով կայացրել է տարբեր վճիռներ.....	7
«Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի տնօրենը ենթարկվեց վարչական պատասխանատվության տեղեկություն չտրամադրելու համար.....	8
ԻԱԿ-ն ընդդեմ «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ի.....	9
ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ ՖՆ Լիցենզավորման գործակալության և ՀՀ ՖՆ Ֆինանսական վերահսկողության տեսչության.....	10

ՏԱ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պետական մարմինները 30 հազարից ավել էլեկտրոնային հարցում-դիմումներ են ստացել.....	12
Կոռուպցիան այնպես, ինչպես կա.....	16
Նախագահականից դրամաշնորհներ ստացած կազմակերպությունները չեն հայտնաբերվում.....	18
305 մլն դրամ բյուջեից՝ որպես պարգևատրում.....	20

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՏՎԽ կարծիքը Սուսաննա Բաղդասարյանը «Հայք» թերթի խմբագրության, «Հայք» թերթի թղթակից Արման Գալոյանի, Սվետլանա Առաքելյանի դեմ հայցի վերաբերյալ.....	25
ՏՎԽ-ի կարծիքը Տիգրան Ուրիխանյանն ընդդեմ Էդգար Բարսեղյանի դատական գործի վերաբերյալ.....	27
ՍԵՎ ՑՈՒՑԱԿ - 2012, 1-ին եռամսյակ.....	30

ENGLISH VERSION

BLACK LIST, 1st quarter, 2013.....	31
The FOICA filed a lawsuit against the RA National Assembly.....	32
FOICA vs. the RA National Security Service.....	32
The head of the "Daughter Marianna" Co. Ltd was imposed to pay an administrative penalty for not providing information.....	33
Football Federation of Armenia must answer in 5 days.....	33
FOICA vs. RA Ministry of Finance, Licensing Agency of RA MF and Financial Oversight Inspectorate of RA MF.....	34
FOICA vs. "Ashtarak kat" CJSC.....	35
Over 30.000 electronic requests in 1 year.....	36
The Office to the RA President has allocated AMD 500 milliom to 31 NGOs.....	40
The Office to the RA President has allocated AMD 500 milliom to 31 NGOs.....	40

Ծրագրի ղեկավար՝ Շուշան Դոյդոյան
Project Director Shushan Doydoyan



«Դու տեղյակ լինելու իրավունք ունես» տեղեկագիրը հրապարակվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից իրականացվող «Տեղեկատվության ազատությունը որպես համայնքային մասնակցության միջոց» ծրագրի շրջանակում, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության տրամադրած աջակցությամբ:

Հոդվածներում արտահայտված տեսակետները հեղինակային են և չեն արտահայտում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետը:

ԻԱԿ-ը դատի է տվել Ազգային ժողովին

2013թ.-ի ապրիլի 8-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հայց է ներկայացրել դատարան ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի՝ տեղեկատվության տրամադրումն առանց պատշաճ հիմնավորման մերժելու համար: ԻԱԿ-ը դատարանից խնդրել է ճանաչել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը և ՀՀ Ազգային ժողովին պարտավորեցնել տրամադրել հայցվող տեղեկությունները:

2012թ.-ի նոյեմբերի 22-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր ՀՀ Ազգային ժողովին և խնդրել էր հայտնել տեղադրված են արդյո՞ք ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում ՀՀ Աժ նախագահի կարգադրությունները, ինչպես նաև խնդրել էր տրամադրել ՀՀ Աժ նախագահի 2012թ.-ի առաջին կիսամյակի կարգադրությունների պատճենները:

Հարցման պատասխանը չստանալով՝ 2012թ. դեկտեմբերի 5-ին ԻԱԿ-ը տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում էր ներկայացրել Աժ-ին: Նույն օրը՝ դեկտեմբերի 5-ին, Աժ-ն էլեկտրոնային տարբերակով պատասխանել էր, որ տեղեկատվությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, և այն կտրամադրվի 30-օրյա ժամկետում: Սակայն, ըստ էության պատասխան Աժ-ն տրամադրեց ոչ թե 30-օրյա ժամկետում, այլ 2013թ.-ի մարտի 4-ին՝ հարցումն ուղարկելուց շուրջ 4 ամիս հետո: Ընդ որում, Աժ-ն տրամադրել էր թերի պատասխան, քանի որ ըստ հերթական համարների չէր ներկայացրել 12 կարգադրությունների պատճեն:

2013թ.-ի մարտի 7-ին ԻԱԿ-ը կրկին հարցմամբ դիմեց Աժ-ին՝ խնդրելով տրամադրել նաև չտրամադրված 12 կարգադրությունների պատճենները: Սակայն, Աժ-ն մերժեց տրամադրել դրանք՝ պատճառաբանելով, որ տվյալ կարգադրությունները պարունակում են աշխատողի վերաբերյալ անձնական տվյալներ:

Աժ-ն չէր նշել մերժման որևէ իրավական հիմք, չէր ներկայացրել որևէ պատճառաբանություն, թե ինչ տվյալների մասին է խոսքը, որպեսզի ԻԱԿ-ը կարողանար գնահատել արդյոք իսկապես նման տվյալներն անձնական են, թե՛ ոչ: ՀՀ Ազգային ժողովի այս մերժման իրավաչափությունն էլ հենց բողոքարկել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դատական կարգով: 2013թ.-ի ապրիլի 8-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հայց է ներկայացրել դատարան ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի՝ տեղեկատվության տրամադրումն առանց պատշաճ հիմնավորման մերժելու համար: ԻԱԿ-ը դատարանից խնդրել է ճանաչել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը և ՀՀ Ազգային ժողովին պարտավորեցնել տրամադրել հայցվող տեղեկությունները:

Դատական գործի մանրամասներին, ԻԱԿ հայցադիմումին կարող եք ծանոթանալ <http://www.foi.am/hy/all-cases/item/1189/>:

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան պարտավոր է պատասխանել 5 օրում

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը քաղաքացի Աշոտ Մնացականյանի խնդրանքով գրավոր հարցում է ուղղել Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ռուբեն Հայրապետյանին՝ պարզաբանելու, թե ինչու Մնացականյանը, տոմս ունենալով հանդերձ, չի կարողացել դիտել Հայաստան-Չեխիա ֆուտբոլային խաղը:

Ի ԱԿ իրավաբան Գեուրգ Հայրապետյանը խնդրել է հայտնել, թե ովքեր կամ որ կազմակերպությունն է պատասխանատու 2013թ.-ի մարտի 26-ին Հայաստան-Չեխիա ֆուտբոլային հանդիպման տոմսերի ստուգման եւ տոմս ձեռք բերած քաղաքացիների ներկայությունը կազմակերպելու եւ ապահովելու համար:

«Նախատեսվում է արդյոք փոխհատուցել վերանշյալ ֆուտբոլային հանդիպման տոմսեր ձեռք բերած այն քաղաքացիների կրած նյութական վնասները, ում արգելվել է մուտք գործել մարզադաշտ, եթե այո, ապա ո՞վ կամ ո՞ր մարմին է տրամադրելու փոխհատուցում եւ ի՞նչ ընթացակարգով», - նշված է գրավոր հարցման մեջ:

Հիշեցնենք, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում:

Այս պատասխանից է կախված, թե ում դեմ հայց կներկայացնեն տուժողները, ովքեր փոխհատուցում չստանալու դեպքում, որոշել են գնալ մինչեւ վերջ եւ հաստատել արդարություն:

Սղբյուրը՝ www.Iragir.am

ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ ԿԱ Ազգային անվտանգության ծառայության

2013թ.-ի ապրիլի 5-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հայց ներկայացրեց ՀՀ Վարչական դատարան՝ դատարանից խնդրելով ճանաչել Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ի՝ տեղեկատվության ազատության եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքների խախտման փաստը եւ պարտադրել ԱԱԾ-ին ԻԱԿ-ին տրամադրել սպառիչ տեղեկատվություն:

2013թ.-ի փետրվարի 11-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր ՀՀ Կառավարությանն առընթեր Ազգային անվտանգության ծառայությանը՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

«ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին՝ համաձայնագրի շրջանակներում.

1. Ո՞ր տեղեկությունների գաղտնիության աստիճանն է վերանայվել:

2. Ովքե՞ր կարող են դիմել գաղտնագրված տեղեկությունները ստանալու համար:
3. Գաղտնագրված տեղեկությունները ո՞ր մարմնից կարելի է ստանալ:
4. Խնդրում եմ տրամադրել 18.04.2011թ. ստորագրված «ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին» համաձայնագրի պատճեն»:

2013թ.-ի փետրվարի 21-ին ԱԱԾ-ն տրամադրել է թերի պատասխան: ԻԱԿ-ը ԱԱԾ-ի պատասխանը համարել է թերի, քանի որ ԱԱԾ-ն ըստ էության չէր

պատասխանել ԻԱԿ-ի ներկայացրած հարցերին, ինչպես նաև չէր տրամադրել խնդրված համաձայնագրի պատճենը:

2013թ.-ի մարտի 7-ին տեղեկություն ստանալու գրավոր կրկնակի հարցմամբ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը նորից դիմեց ԱԱԾ-ին՝ սակայն կրկին ստացավ նույն թերի պատասխանը:

Արդյունքում, 2013թ.-ի ապրիլի 5-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հայց ներկայացրեց ՀՀ Վարչական դատարան՝ դատարանից խնդրելով ճանաչել Ինֆորմացիայի ազատության կենտ-

րոն ՀԿ-ի՝ տեղեկատվության ազատության եւ ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքների խախտման փաստը եւ պարտադրել ԱԱԾ-ին ԻԱԿ-ին տրամադրել սպառիչ տեղեկատվություն:

ԻԱԿ-ի՝ 2013թ.-ի ապրիլի 5-ին ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումին կարող եք ծանոթանալ այստեղ՝

[http://www.foi.am/hy/all-cases/item/1210/:](http://www.foi.am/hy/all-cases/item/1210/)

Վարչական դատարանը նմանատիպ գործերով կայացրել է տարբեր վճիռներ

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնած նույնական 2 դատական գործերով ՀՀ վարչական դատարանը կայացրել է 2 բացարձակ տարբեր վճիռներ:

2011թ.-ի նոյեմբերի 12-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկատվություն ստանալու հարցմամբ դիմել էր «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ին՝ խնդրելով հայտնել կազմակերպության կաթնամթերքը արտադրվում է բնակա՞ն կաթից, թե՛ կաթնափոշուց, ինչպես նաև տրամադրել ցանկը, թե կազմակերպության կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը՝ ոչ, և/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է: Նույնաբովանդակ հարցմամբ ԻԱԿ-ը 2011թ.-ի նոյեմբերի 18-ին դիմել էր նաև «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ին: 2 կազմակերպություններն էլ ԻԱԿ-ի հարցումը թողել էին անպատասխան: 2011թ.-ի դեկտեմբերի 6-ին ԻԱԿ-ը կրկնակի հարցումներով դիմել էր «Աշտարակ-Կաթ» ՓԲԸ-ին և «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ին, սակայն կրկնակի հարցմամբ էլ պահանջվող տեղեկությունները չէին տրամադրվել:

2011թ.-ի դեկտեմբերի 19-ին ԻԱԿ-ը 2 կազմակերպությունների անգործությունը վիճարկեց դատական կարգով՝ հայցով դիմելով ՀՀ վարչական դատարան և խնդրելով պարտավորեցնել կազմակերպություններին տրամադրել ամբողջական տեղեկատվություն, ինչպես նաև տեղեկությունները չտրամադրելու համար կազմակերպությունների տնօրեններին ենթարկել վարչական պատասխա-

նատվության: Երկու դեպքում էլ դատարանը գործը վարույթ էր ընդունել միայն կազմակերպությունների տնօրեններին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով:

«Դուստր Մարիաննա»-ի գործով ՀՀ վարչական դատարանը (դատավոր Ա. Դարբինյան) վճիռ կայացրեց 2013թ.-ի փետրվարի 19-ին, որով ամբողջությամբ բավարարեց ԻԱԿ-ի հայցը՝ «Դուստր Մարիաննա» ընկերության տնօրենին տեղեկություն չտրամադրելու համար ենթարկելով վարչական պատասխանատվության և պարտավորեցնելով փոխհատուցել ԻԱԿ-ի կատարած դատական ծախսերը:

Իսկ «Աշտարակ-Կաթ»-ի գործով ՀՀ վարչական դատարանը (դատավոր Ա. Միրզոյան) վճիռ կայացվեց 2013թ.-ի մարտի 26-ին և ամբողջությամբ մերժեց ԻԱԿ-ի հայցը:

Դատական գործերի մանրամասներին, ԻԱԿ հայցադիմումներին և դատարանի վճիռներին կարող եք ծանոթանալ <http://www.foi.am/hy/all-cases/item/962/> և <http://www.foi.am/hy/all-cases/item/961/>:

«Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի տնօրենը ենթարկվեց վարչական պատասխանատվության տեղեկություն չտրամադրելու համար

2013թ.-ի փետրվարի 19-ին ՀՀ վարչական դատարանն իր վճռով որոշեց վարչական պատասխանատվության ենթարկել «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի տնօրեն Տիգրան Վարդանյանին՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հարցումներից պատասխան չտրամադրելու համար:

2011 թ.-ի նոյեմբերի 18-ին ԻԱԿ-ը տեղեկատվություն ստանալու գրավոր հարցում էր ուղարկել «Դուստր Մարիաննա» ՍՊԸ տնօրեն Տիգրան Վարդանյանին՝ խնդրելով տեղեկություններ կազմակերպության արտադրած կաթնամթերքի վերաբերյալ: Կազմակերպությունն ԻԱԿ-ի հարցումը թողել էր անպատասխան: 06.12.2011թ.-ին ԻԱԿ-ը կրկնակի հարցմամբ էր դիմել ՍՊԸ-ին:

Կրկնակի հարցմանն ի պատասխան՝ 2011թ.-ի դեկտեմբերի 16-ին ՍՊԸ-ն հայտնել էր, որ ԻԱԿ-ի խնդրած տեղեկությունը մակնշված է կազմակերպության արտադրանքի յուրաքանչյուր տուփի վրա, ինչպես նաև հետաքրքրող տեղեկությունները ստանալու համար հղում էր արել կազմակերպության կայքին: Սակայն ԻԱԿ-ի խնդրած տեղեկություններն առկա չէին ոչ կազմակերպության արտադրանքի տուփերի վրա, ոչ էլ կայքում:

2011թ.-ի դեկտեմբերի 19-ին ԻԱԿ-ը հայցով դիմեց ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով պարտավորեցնել «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ին տրամադրել ամբողջական տեղեկատվություն, ինչպես նաև տեղեկությունները չտրամադրելու համար ՍՊԸ-ի

տնօրեն Տիգրան Վարդանյանին ենթարկել վարչական պատասխանատվության: Դատարանը գործը վարույթ էր ընդունել միայն կազմակերպության տնօրենին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով:

2013թ.-ի փետրվարի 19-ին կայացրած վճռով ՀՀ վարչական դատարանն ամբողջությամբ բավարարեց ԻԱԿ-ի հայցը՝ «Դուստր Մարիաննա» ընկերության տնօրենին տեղեկություն չտրամադրելու համար ենթարկելով վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 80.000 ՀՀ դրամի չափով (30.000 ՀՀ դրամ ԻԱԿ-ի առաջին հարցմամբ եւ 50.000 ՀՀ դրամ ԻԱԿ-ի կրկնակի հարցմամբ խնդրվող տեղեկությունները չտրամադրելու համար), ինչպես նաև պարտավորեցնելով «Դուստր Մարիաննա» ընկերության տնօրեն Տիգրան Վարդանյանին փոխհատուցել ԻԱԿ-ի կատարած՝ 100.000 ՀՀ դրամ դատական ծախսերը և 3.000 ՀՀ դրամ վճարած պետական տուրքի գումարը:

Դատական գործի մանրամասներին, ԻԱԿ հայցադիմումին և դատարանի վճռին կարող եք ծանոթանալ <http://www.foi.am/hy/all-cases/item/962/>:

ԻԱԿ-ն ընդդեմ «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ի

Վճռի հրապարակումը մի քանի անգամ հետաձգվեց նախ մինչև 2013թ.-ի հունվարի 23-ը, ապա մինչև 2013թ.-ի մարտի 5-ը: Դատարանն 2013թ.-ի մարտի 26-ի վճռով ամբողջությամբ մերժեց ԻԱԿ-ի հայցը:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2011թ.-ի նոյեմբերի 12-ին տեղեկատվություն ստանալու հարցմամբ դիմել էր «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ի տնօրեն Ստեփան Ասլանյանին և խնդրել էր տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ընկերության կաթնամթերքը արտադրվում է բնական կաթից, թե՞ կաթնափոշուց:
2. Խնդրում ենք տրամադրել ցանկը, թե Ձեր ընկերության կաթնամթերքներից որն է բնական կաթից, որը՝ ոչ, և/կամ որ արտադրատեսակի մեջ բնական կաթի քանակն ինչքան է:

Այս հարցումն անպատասխան մնալուց հետո՝ 06.12.2011թ.-ին, ԻԱԿ-ը տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում է ուղարկել «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ին՝ խնդրելով տրամադրել վերոնշյալ տեղեկությունները: Սակայն, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կրկնակի հարցումը նույնպես մնաց անպատասխան:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2011թ.-ի դեկտեմբերի 19-ին հայց ներկայացրեց ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով պարտավորեցնել «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ին տրամադրել ամբողջական տեղեկատվություն, ինչպես նաև ԻԱԿ-ի խնդրած տեղեկությունները չտրամադրելու համար ՓԲԸ-ի տնօրեն Ստեփան Ասլանյանին ենթարկել վարչական պատասխանատվության:

12.01.2012թ.-ին՝ այն բանից հետո, երբ ԻԱԿ-ն արդեն հայց էր ներկայացրել դատարան, «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ից պատասխան գրություն ստացվեց, որում ՓԲԸ-ն նշել էր, որ ԻԱԿ-ի առաջին հարցմանը պատասխանել է, սակայն պատասխան նամակը հետ է վերադարձել: Ընկերությունը կից ներկայացրել էր ԻԱԿ-ի հարցման պատասխանի կրկնօրինակը:

ՀՀ վարչական դատարանը 2012թ.-ի հունվարի 23-ին որոշում կայացրեց մերժել ԻԱԿ-ի հայցադիմումը:

մը վարույթ ընդունել՝ գտնելով, որ հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության:

2012թ.-ի փետրվարի 6-ին ԻԱԿ-ը բողոքարկեց Վարչական դատարանի որոշումը: 2012թ.-ի մարտի 5-ին ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը՝ դատավոր Ա.Բաբայանի նախագահությամբ, ԻԱԿ-ի վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակի: Դատարանը որոշել է «Աշտարակ կաթ» ՓԲԸ տնօրեն Ստեփան Ասլանյանին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասով ԻԱԿ-ի հայցը բավարարել, իսկ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասով մերժել է ԻԱԿ-ի հայցը:

ՀՀ Վարչական դատարանը վարույթ ընդունեց ԻԱԿ-ի հայցն ընդդեմ «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ի: 2012թ.-ի օգոստոսի 7-ին տեղի ունեցած առաջին դատական նիստը հետաձգվեց: Հաջորդ դատական նախնական նիստը տեղի ունեցավ 2012թ.-ի հոկտեմբերի 4-ին, որն էլ ավարտվեց և գործը մտավ դատաքննության փուլ:

Հաջորդ դատական նիստը տեղի ունեցավ 2012թ.-ի նոյեմբերի 16-ին, որով դատաքննության փուլն ավարտվեց, եւ ՀՀ Վարչական դատարանը ԻԱԿ-ն ընդդեմ «Աշտարակ կաթ» ՓԲԸ-ի գործով վճռի հրապարակման օր նշանակեց 2012թ.-ի դեկտեմբերի 5-ը: Սակայն, վճռի հրապարակումը մի քանի անգամ հետաձգվեց: Վերջապես, 2013թ.-ի մարտի 26-ի դատարանի վճռով ամբողջությամբ մերժեց ԻԱԿ-ի հայցը:

ԻԱԿ-ի հայցադիմումին, ՀՀ վարչական դատարանի՝ 23.01.2012թ.-ի որոշմանը, ՀՀ վարչական դատարանի որոշման դեմ ԻԱԿ-ի բողոքին, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի որոշմանը կարող եք ծանոթանալ այստեղ՝

<http://www.foi.am/hy/all-cases/item/961/>:

ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ ՖՆ Լիցենզավորման գործակալության եւ ՀՀ ՖՆ ֆինանսական վերահսկողության տեսչության

2013թ.-ի մարտի 5-ին դատաքննության փուլն ավարտվեց: 2013թ.-ի մարտի 20-ին դատարանը հրապարակեց իր վճռը, որով ամբողջությամբ մերժեց ԻԱԿ-ի հայցը:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2012թ.-ի մայիսի 29-ին տեղեկատվություն ստանալու հարցումներ էր ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարության Լիցենզավորման գործակալության պետ Կարեն Թամազյանին եւ Ֆինանսական վերահսկողության տեսչության պետ Սոնա Ղարիբյանին՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ստացե՞լ են արդյոք պարզեատրումներ (պարզեավճարներ, նվերներ) Լիցենզավորման գործակալության (Ֆինանսական վերահսկողության տեսչության) աշխատակիցները 2011թ.-ին:
2. Եթե այո, ապա ովքե՞ր են պարզեատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով):
3. Որքա՞ն է կազմել Լիցենզավորման գործակալության (Ֆինանսական վերահսկողության տեսչության) աշխատակիցների ստացած դրամական պարզեատրումների ընդհանուր գումարը:
4. Որքա՞ն է կազմել Լիցենզավորման գործակալության (Ֆինանսական վերահսկողության տեսչության) աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը եւ նվերների արժեքների ընդհանուր գումարը:

Ի պատասխան ԻԱԿ-ի հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել էր թերի պատասխան: Պատասխանը համարվել էր թերի, քանի որ չէին տրամադրվել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի խնդրած՝ Լիցենզավորման գործակալության եւ ֆինանսական վերահսկողության տեսչության՝ պարզեատրում ստացած աշխատակիցների եւ յուրաքանչյուրի ստացած դրամական պարզեատրումների չափի մասին տեղեկությունները (2-րդ հարցի պատասխանը):

2012թ.-ի հունիսի 26-ին ԻԱԿ-ը կրկին հարցումներ է ուղարկել՝ խնդրելով տրամադրել ամբողջական եւ սպառիչ տեղեկատվություն:

Ի պատասխան կրկնակի հարցումներին՝ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել է գրություն, որով, հղում կատարելով ՀՀ աշխատանքային օրենսգրքին, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքին եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին, մերժվել է հարցումների 2-րդ կետով խնդրված տեղեկատվության տրամադրումը, այն պատճառաբանությամբ, որ դա աշխատողի անձնական տվյալի վերաբերյալ տեղեկատվություն է:

Նշենք, որ ԻԱԿ-ը խնդրել է պարզեատրում ստացած աշխատակիցների մասին տեղեկություն ըստ հաստիքների, այսինքն՝ ոչ անվանական: Բացի այդ, ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի գրության համաձայն՝ քաղաքացիական ծառայողների ստացած պարզեատրումների արժեքի մասին տեղեկատվության տրամադրման սահմանափակումներ քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ չկան: Վերոնշյալ 2 պայմանների համակցությունը ցույց է տալիս, որ խնդրվող տեղեկությունը չի վերաբերում անհատական քաղաքացիական ծառայողի անձնական կյանքի անձեռնմխելիությանը:

Արդյունքում, 2012թ.-ի հուլիսի 24-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հայցով դիմել է ՀՀ վարչական դատարան՝ խնդրելով.

- Գնահատել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման փաստը եւ ՀՀ ֆինանսների նախարարությանը պարտավորեցնել տրամադրել պահանջվող տեղեկատվությունն այն մասին, թե 2011թ.-ին Լիցենզավորման գործակալության աշխատակիցները ստացած պարզեատրումների ընդհանուր գումարը:

ծակալության եւ ֆինանսական վերահսկողության տեսչության աշխատակիցներն ըստ հաստիքների ինչքան գումարով են պարգևատրվել (հարցումների 2-րդ հարցեր):

- Պահանջվող տեղեկությունների տրամադրումը ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Արմեն Շահնազարյանի կողմից երկու անգամ մերժելու, ինչպես նաեւ ՀՀ ֆինանսների նախարարության Լիցենզավորման գործակալության պետ Կարեն Թամազյանի եւ ՀՀ ֆինանսների նախարարության Ֆինանսական վերահսկողության տեսչության պետ Սոնա Ղարիբյանի կողմից տեղեկատվություն տրամադրելու հարցումներին չպատասխանելու եւ այդ ձեւով պահանջվող տեղեկատվությունը չտրամադրելու համար, նրանցից յուրաքանչյուրին տուգանել 30.000 (երեսուն հազար) դրամի չափով:

Դատական առաջին նիստը տեղի ունեցավ 2012թ.-ի նոյեմբերի 14-ին: Այս գործով նախնական դատական նիստն ավարտվեց, և գործն անցավ դատաքննության փուլ:

Հաջորդ դատական նիստը տեղի ունեցավ 2013թ.-ի մարտի 5-ին, որով դատաքննության փուլն ավարտվեց: 2013թ.-ի մարտի 20-ին դատարանը հրապարակեց իր վճռը, որով ամբողջությամբ մերժեց ԻԱԿ-ի հայցը:

ԻԱԿ-ի՝ 2012թ.-ի հուլիսի 24-ի հայցադիմումին և ՀՀ վարչական դատարանի՝ 2013թ.-ի մարտի 20-ի վճռին կարող եք ծանոթանալ այստեղ՝ <http://www.foi.am/hy/all-cases/item/1053/>:

Պետական մարմինները 30 հազարից ավել էլեկտրոնային հարցում-դիմումներ են ստացել

2012թ.-ին ՀՀ նախարարությունները ստացել են 28 հազար 902, իսկ մարզպետարանները՝ 3 հազար 629 էլեկտրոնային հարցում եւ դիմում:

2013թ.-ի փետրվարի 5-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու էլեկտրոնային հարցումներով դիմեց 30 պետական մարմինների՝ ՀՀ Նախագահի աշխատակազմ, ՀՀ Ազգային ժողով, ՀՀ բոլոր նախարարություններ եւ մարզպետարաններ: Այս անգամ ԻԱԿ-ը հարցումներն ուղարկեց ոչ թե փոստային ծառայության, այլ էլեկտրոնային փոստի միջոցով:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի այս նախաձեռնությունն ուներ մի քանի նպատակ. նախ ստուգել՝ արդյոք տեղեկություն տնօրինող պետական կառավարման մարմինները պատշաճ կերպով ընթացք տալիս են էլեկտրոնային փոստով ստացված հարցումներին եւ դիմումներին, եւ որքանով են օպերատիվ աշխատում այս դեպքում: ԻԱԿ-ը նաեւ նպատակ ուներ ստանալ տվյալներ այն մասին, թե ինչպես են քաղաքացիներն օգտագործում տեղեկատվական տեխնոլոգիաները պետական մարմիններին դիմելու համար, քանի դիմում կամ հարցում է մեկ տարվա կտրվածքով ներկայացվել այս կամ այն պետական մարմին: Եւ վերջապես, ԻԱԿ-ի էլեկտրոնային հարցումները հնարավորություն տվեցին եւս մեկ անգամ պարզել, թե ինչպես են պետական մարմինները կիրառում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, իրականացնում յուրաքանչյուրի տեղեկատվության ազատության իրավունքը:

Տեղեկություն ստանալու էլեկտրոնային հարցմամբ ԻԱԿ-ը խնդրել էր հայտնել.

1. Իրականացվում է արդյոք տվյալ գերատեսչության ստացած էլեկտրոնային հարցումների եւ դիմումների հաշվառում,
2. Եթե այո, ապա էլեկտրոնային հարցումների եւ դիմումների հաշվառումն իրականացվում է առանձին, թե՞ ընդհանուր:
3. Քանի՞ էլեկտրոնային հարցում եւ դիմում է ստացել տվյալ գերատեսչությունը 2012թ.-ին

(եթե էլեկտրոնային հարցումների եւ դիմումների հաշվառումն իրականացվում է առանձին, ապա խնդրում ենք տրամադրել հարցումների քանակն առանձին, դիմումներինը՝ առանձին):

30 էլեկտրոնային հարցումներն ուղարկվել են էլեկտրոնային այն հասցեներին, որոնք նշված են տվյալ մարմինների պաշտոնական ինտերնետային կայքերում: Թեեւ ԻԱԿ-ը բոլոր հարցումներն ուղարկել էր էլեկտրոնային փոստով, սակայն դրանց մեծ մասին պատասխան տրամադրվել է թղթային, կամ նաեւ թղթային տարբերակով: Սա եւս մեկ անգամ վկայում է այն մասին, որ չկան ընթացակարգեր էլեկտրոնային հարցումները եւ դիմումները գրանցելու եւ դրանց էլեկտրոնային տարբերակով պատասխանելու համար:

Պատասխանների բովանդակությունը

30 մարմիններից 9-ը չեն պատասխանել էլեկտրոնային հարցումներին: Դրանք են՝ ՀՀ Նախագահի աշխատակազմը, ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ Տարածքային կառավարման, ՀՀ բնապահպանության, ՀՀ գյուղատնտեսության, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունները, ինչպես նաեւ Լոռու եւ Վայոց Ձորի մարզպետարանները: Պատասխանների վերլուծությունը կներկայացնենք 21 կառույցներից ստացված պատասխանների բովանդակության հիման վրա:

Առաջին հարցը վերաբերում էր տվյալ գերատեսչության ստացած էլեկտրոնային հարցումների եւ դիմումների հաշվառմանը: Այս հարցին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը պատասխանել է, որ նախարարությունը էլեկտրոնային հարցումներ եւ դիմումներ առհասարակ չի ստացել: Իսկ ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարությունը հայտնել է, որ էլեկտրոնային հարցումների եւ դիմումների հաշվառումն նախարարությունը չի իրականացնում: Գեղարքու-

միջի մարզպետարանն էլ այս հարցին չէր պատասխանել: ԻԱԿ-ի հարցմանը պատասխանած մնացած բոլոր մարմիններն այս հարցին տվել են լիարժեք պատասխան, ընդ որում՝ գրեթե բոլորն իրենց պատասխան գրություններում նշել են, որ էլեկտրոնային հարցումների եւ դիմումների հաշվառումն իրականացվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Մալբերի» համակարգի միջոցով:

Երկրորդ հարցով խնդրել էինք տեղեկացնել, թե տվյալ մարմնում էլեկտրոնային հարցումների եւ դիմումների հաշվառումն իրականացվում է միասին, թե՛ առանձին: Միակ կառույցը, որտեղ էլեկտրոնային հարցումների եւ դիմումների հաշվառումն իրականացվում է առանձին, Տավուշի մարզպետարանն է: Մնացած բոլոր մարմիններն այս հարցին ի պատասխան հայտնել են, որ էլեկտրոնային հարցումներն եւ դիմումները միասնական են հաշվառվում: ՀՀ արտակարգ իրավիճակների եւ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների եւ Գեղարքունիքի մարզպետարանի պատասխաններում այս հարցին անդրադարձ չի կատարվել:

Երրորդ հարցին, որով խնդրվել էր ներկայացնել տվյալ մարմնի ստացած էլեկտրոնային հարցումների եւ դիմումների քանակը, չեն պատասխանել Արարատի մարզպետարանը, ՀՀ արտակարգ իրավիճակների եւ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունները: Մնացած մարմինները ներկայացրել են ստացված էլեկտրոնային հարցումների եւ դիմումների կամ ընդհանուր քանակը, կամ էլ էլեկտրոնային հարցումների եւ դիմումների քանակն առանձին:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը հայտնել է, որ էլեկտրոնային հարցումների եւ դիմումների հաշվառում չի իրականացնում, իսկ Արմավիրի մարզպետարանը էլեկտրոնային հարցումների եւ դիմումների առանձնացված թիվ չի նշել, քանի որ մարզպետարանում իրականացվում է բոլոր եղանակներով ստացված հարցումների եւ դիմումների ընդհանուր հաշվառում: Ուստի, վերոնշյալ մարմինների ստացած էլեկտրոնային հարցումների եւ դիմումների քանակը չենք կարող համեմատել, քանի որ առանձնացված տվյալներ էլեկտրոնային հարցումների եւ դիմումների վերաբերյալ չեն տրամադրվել:

Սյունիքի մարզպետարանը նշել է նաեւ իր ստացած գրավոր եւ էլեկտրոնային հարցումների եւ դիմումների ընդհանուր քանակը. մարզպետարանի ստացած 26 հարցումներից էլեկտրոնային տարբերակով ներկայացված են եղել 11-ը, իսկ 2.431 դիմումներից էլեկտրոնային տարբերակով ներկայացվել են միայն 7-ը:

Ստացված հարցումների եւ դիմումների ընդհանուր թվեր նշել է նաեւ Տավուշի մարզպետարանը. Տավուշի մարզպետարանը ստացել է 6 հարցում, որոնցից ոչ մեկը ներկայացված չի եղել էլեկտրոնային տարբերակով, եւ 1.532 դիմում, որոնցից էլեկտրոնային են եղել միայն 3-ը:

Այսպիսով, ստացված պատասխանների համեմատությունը ցույց է տալիս, որ **2012թ.-ի ընթացքում էլեկտրոնային տարբերակով ամենաշատ հարցումներ եւ դիմումներ ստացել է ՀՀ սփյուռքի նախարարությունը՝ 12.765 հարցում եւ դիմում: Հաջորդը ՀՀ ֆինանսների նախարարությունն է, որը 2012թ.-ին ստացել է 8.601 էլեկտրոնային հարցում եւ դիմում: Էլեկտրոնային տարբերակով ամենաշատ հարցումներ եւ դիմումներ ստացած 3-րդ մարմինը ՀՀ կրթության և գիտության նախարարությունն է՝ 5.027 էլեկտրոնային հարցում եւ դիմում:**

Մարզպետարաններից էլեկտրոնային տարբերակով ամենաշատ հարցումներ եւ դիմումներ ստացել է Արագածոտնի մարզպետարանը՝ 2.099 հարցում եւ դիմում:

Այսպիսով, 18 նախարարություններից միայն 3-ի՝ ՀՀ սփյուռքի, ՀՀ ֆինանսների եւ ՀՀ կրթության և գիտության նախարարությունների՝ 2012թ.-ին ստացած էլեկտրոնային հարցումների եւ դիմումների թիվը գերազանցում է 25.000-ը:

2012թ.-ին միայն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունն է, որ էլեկտրոնային որեւէ հարցում կամ դիմում չի ստացել:

2012թ.-ին էլեկտրոնային տարբերակով ամենաքիչ հարցումներ եւ դիմումներ ստացել են Տավուշի, Շիրակի, Սյունիքի եւ Գեղարքունիքի մարզպետարանները: Տավուշի մարզպետարանը ստացել է էլեկտրոնային 3 դիմում (էլեկտրոնային հարցում չի ստացել), Շիրակի մարզպետարանը՝ 16, Սյունիքի մարզպետարանը՝ 18, իսկ Գեղարքունիքի մարզպետարանը՝ 21 հարցում եւ դիմում:

Նախարարություններից էլեկտրոնային տարբերակով ամենաքիչ հարցումներ եւ դիմումները ստացել է 33 քաղաքաշինության նախարարությունը՝ 77 հարցում եւ դիմում:

ԻԱԿ-ի հարցմանը պատասխանած բոլոր նախարարությունները միասին 2012թ.-ին ստացել են 28.902 էլեկտրոնային հարցում եւ դիմում, իսկ մարզպետարանները՝ 3.629 էլեկտրոնային հարցում եւ դիմում:

Այսպիսով, էլեկտրոնային հարցումների մեծ քանակը ենթադրում է պետական կառավարման մարմինների աշխատառժի որոշ փոփոխություններ.

- նախ, էլեկտրոնային հարցմամբ դիմած քաղաքացին ակնկալում է էլեկտրոնային պատասխան, ինչն ավելի արդյունավետ է ժամկետների առումով, ուստի ոչ ուշ ապագայում կարիք կառաջանա ստեղծել համապատասխան տեխնիկական պայմաններ պետական կառավարման, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման մարմինների համար քաղաքացիների էլեկտրոնային հարցումները եւ դիմումները գրանցելու եւ դրանց էլեկտրոնային տարբերակով պատասխանելու համար,
- էլեկտրոնային հարցումների լայն կիրառությունը ստեղծում է օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտություն. մինչ օրս «Տեղեկատվության ազատության մասին» 33 օրենքում հստակորեն սահմանված չեն էլեկտրոնային հարցումը եւ էլեկտրոնային հարցմանն ընթացք տալու կարգը,
- վեջապես, անհրաժեշտ է ապահովել պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատու պաշտոնյաների գիտելիքների բարձրացում տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ոլորտում, ինչն արդյունավետ աշխատանքի կարելու գույն նախապայման է:

Պատասխանների բովանդակությունը SU տեսանկյունից

Ինչպես նշեցինք, ԻԱԿ-ը 33 Նախագահի աշխատակազմին, 33 Ազգային ժողովին, 33 բոլոր նախարարություններին եւ բոլոր մարզպետարաններին ներկայացրել էր 30 հարցում, որոնցից պատասխան ստացել է 21-ը (70%), իսկ 9-ը (30%)

մնացել է անպատասխան: Ընդ որում, 9 լուռ մերժումներից 5-ի հեղինակը նախարարություններն են (33 Տարածքային կառավարման, 33 բնապահպանության, 33 գյուղատնտեսության, 33 էկոնոմիկայի, 33 էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունները), 2-ինը՝ մարզպետարաններ (Լոռու եւ Վայոց Ձորի մարզպետարանները): Էլեկտրոնային հարցումներն անպատասխան են թողել նաեւ 33 Նախագահի աշխատակազմը եւ 33 Ազգային ժողովը:

Հատկանշական է, որ 33 Նախագահի պաշտոնական կայքում առանձին բաժին գոյություն ունի՝ «Նամակ Նախագահին»: Սակայն կայքի այդ բաժնում նշված է, որ էլեկտրոնային տարբերակով 33 Նախագահին հղած նամակները չեն կարող համարվել պաշտոնական, դրանք բացառապես տեղեկատվական բնույթ ունեն եւ ենթակա չեն պաշտոնական ընթացակարգով քննության (<http://www.president.am/hy/send-letter-to-president/>):

Հարկ է նշել, որ լուռ մերժումները բավական մեծ թիվ են կազմում՝ 30%: ԻԱԿ-ի այս հարցումները ցույց տվեցին, որ էլեկտրոնային հարցումների դեպքում այսօր լուռ մերժումների թիվն այնքան է, ինչքան մի քանի տարի առաջ գրավոր հարցումների դեպքում արձանագրված լուռ մերժումներն էին: Սա կարող է խոսել էլեկտրոնային տարբերակով քաղաքացիների հետ աշխատանքի մշակույթի բացակայության կամ էլեկտրոնային տարբերակով աշխատելու թե գիտելիքների, թե տեխնիկական հմտությունների առումով անպատրաստ լինելու մասին: Իհարկե չի կարելի բացառել նաեւ, որ լուռ մերժումների մեծ թիվը կարող է պայմանավորված լինել էլեկտրոնային փոստին բնորոշ տեխնիկական խնդիրներով:

Պատասխան ստացած 21 հարցումներից 19-ին (ընդհանուր հարցումների 63.3% եւ պատասխան ստացած հարցումների 90.5%) տրվել է լիարժեք պատասխան, որոնցից 17-ին տրվել է ժամանակին լիարժեք պատասխան, 3-ին՝ ուշացած լիարժեք պատասխան: 2 (ընդհանուր հարցումների 6.7% եւ պատասխան ստացած հարցումների 9.5%) հարցման տրամադրվել է թերի պատասխան: Ընդ որում, թերի պատասխանը ներկայացվել է առանց ժամկետների խախտման:

Թերի պատասխանի հեղինակներն են Արարատի եւ Գեղարքունիքի մարզպետարանները: Արարատի մարզպետարանի պատասխանը համարվել է թերի, քանի որ ներկայացված չեն եղել տեղեկություններ մարզպետարանի ստացած էլեկտրոնային հարցումների եւ դիմումների քանակի վերաբերյալ (ԻԱԿ-ի հարցման 3-րդ հարցի պատասխանը): Իսկ Գեղարքունիքի մարզպետարանի պատասխանում բացակայել են տվյալներ էլեկտրոնային հարցումների եւ դիմումների հաշվառման վերաբերյալ (ԻԱԿ-ի հարցման 1-ին եւ 2-րդ հարցերի պատասխանները):

Պատասխան ստացած 21 էլեկտրոնային հարցումներից 12-ին (պատասխան ստացած հարցումների 57.1%) պատասխան տրամադրվել է թղթային տարբերակով՝ փոստային ծառայության միջոցով: 9 (պատասխան ստացած հարցումների 42.9%) հարցման պատասխանը ներկայացվել է էլեկտրոնային փոստի միջոցով: Նշենք նաեւ, որ որոշ դեպքերում էլեկտրոնային փոստով ներկայացված պատասխան գրությանը զուգահեռ ներկայացվել է նաեւ գրության թղթային տարբերակը՝ փոստային ծառայության միջոցով: Այս դեպքերում ԻԱԿ-ը պատասխանը համարել է էլեկտրոնային տարբերակով տրամադրված (բնականաբար, պատասխան գրությունների թղթային տարբերակներն ԻԱԿ-ին են հասել էլեկտրոնային տարբերակներից ուշ):

Թեեւ ԻԱԿ-ը բոլոր հարցումներն ուղարկել էր էլեկտրոնային փոստով, սակայն դրանց մեծ մասին պատասխան տրամադրվել է թղթային, կամ նաեւ թղթային տարբերակով: Սա եւս մեկ անգամ վկայում է այն մասին, որ չկան ընթացակարգեր էլեկտրոնային հարցումները եւ դիմումները գրանցելու եւ դրանց էլեկտրոնային տարբերակով պատասխանելու համար: Էլեկտրոնային հարցումների հարցը կարգավորված չէ նաեւ ՏԱ մասին օրենքով, ուստի ԻԱԿ-ին պատշաճ պատասխան տրամադրելու համար տեղեկություն տնօրինողները նախընտրում են էլեկտրոնային հարցումներին պատասխանել թղթային, կամ նաեւ թղթային տարբերակով:

Պատասխանների ժամկետները

30 էլ. հարցումներից 9-ը (30%) մնացել են անպատասխան, 18-ին (60%) պատասխան տրամադրվել է ժամանակին, իսկ 3-ին (10%)՝ ժամկետների խախտմամբ: Ինչպես տեսանք, բավական մեծ թիվ են կազմում ժամանակին տրամադրված պատասխանները: Հարկ է նաեւ նշել, որ ժամանակին տրամադրված 18 պատասխաններից 15-ի դեպքում ԻԱԿ-ի հարցմանը պատասխանվել է հարցումն ուղարկելուց հետո 1-ից 3 օրվա ընթացքում:

Ժամկետների առումով լավագույնները ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի եւ ՀՀ արդարադատության նախարարություններն են եւ Կոտայքի մարզպետարանը, որոնք ԻԱԿ-ի հարցմանը էլեկտրոնային տարբերակով լիարժեք պատասխան են տրամադրել հարցումն ուղարկելուց 1 օր անց:

Ժամկետների առումով վատագույնը ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությունն է, որն իրեն հասցեագրված էլեկտրոնային հարցմանը թղթային տարբերակով լիարժեք պատասխան է տրամադրել հարցումն ուղարկելուց 1 ամիս 15 օր հետո:

Մնացած մարմիններն ԻԱԿ-ի հարցումներին պատասխանել են 2-ից 11 օրվա ընթացքում: ԻԱԿ-ի հարցումներին պատասխան տրամադրվել է միջինը 5-4 օրում:

Հարցումներին և դրանց պատասխաններին կարող եք ծանոթանալ www.givemeinfo.am կայքի համապատասխան պետական մարմնի բաժնում:

Կոռուպցիան այնպես, ինչպես կա

ՀՀ նախագահի աշխատակազմը 2010-2013թ.թ.-ի ընթացքում ՀԿ-ների ֆինանսավորման համար պետական բյուջեից նախատեսել է շուրջ 500 մլն ՀՀ դրամ, որից 31 ՀԿ այդ 3 տարիների ընթացքում ստացել է 499 միլիոն 818 հազար ՀՀ դրամ ֆինանսավորում:

Տինանսների նախարարությունն «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի պահանջով տեղեկանք է տրամադրել, որից տեղեկանում ենք, որ ՀՀ նախագահի աշխատակազմը 2010-2013թթ. ընթացքում ՀԿ-ների ֆինանսավորման համար պետական բյուջեից նախատեսել է շուրջ 500 մլն ՀՀ դրամ, եւ 31 ՀԿ երեք տարվա ընթացքում ստացել է 499 միլիոն 818 հազար ՀՀ դրամ պետական ֆինանսավորում:

«Զարգացում եւ ինտեգրացիա» ՀԿ-ն 2011-2012 թթ. ֆինանսավորվել է 6 անգամ՝ 74 միլիոն 978 հազար ՀՀ դրամի չափով: Այս ՀԿ-ն 2010-2012-ին ՀՀ նախագահի աշխատակազմից ամենաշատ ֆինանսավորում ստացածն է: Ամենաշատ ֆինանսավորում ստացած հաջորդ ՀԿ-ներն են՝ «Երիտասարդների երկիր» եւ «Արբանյակ» կազմակերպությունները՝ համապատասխանաբար 27 միլիոն 492 հազար եւ 27 միլիոն 10 հազար դրամ: Այս կազմակերպությունների գործունեության մասին համացանցում տվյալներ չգտանք: Փոխարենը ՀՀ արդարադատության նախարարության էլեկտրոնային ռեգիստրում դրանց վերաբերող հետաքրքիր տեղեկություններ գտանք:

Երկու տարում պետության՝ հարկատուներիս փողերից 74,9 միլիոն դրամ ստացած «Զարգացում եւ ինտեգրացիա» ՀԿ հիմնադիրները ՄԻԱԿ հիմնադիր, ՀՀԿ համամասնական ցուցակով պատգամավոր դարձած Լեւոն Մարտիրոսյանն ու իր կինն են:

Բացի «Զարգացում եւ ինտեգրացիա» կազմակերպությունից, եւս վեց ՀԿ պետությունից փող է ստացել թե 2011-ին, թե 2012-ին: Բոլոր վեց ՀԿ-ների հիմնադիրների մեջ կարդում ենք Սուրեն Ներսիսյան անունը:

«Արբանյակ» իրավապաշտպան ՀԿ-ն երկու տարում պետությունից ստացել է 27 միլիոն դրամ: Հիմնադիրներն են՝ Սուրեն Ներսիսյանը, Հովհաննես Բարսեղյանը, Ամալյա Բալաբեկյանը:

«Մեր երկրի ապագան» մեր ձեռքերումն իրավապաշտպան ՀԿ-ն երկու տարում պետությունից ստացել է ավելի քան 26 միլիոն դրամ: Հիմնադիրներն են՝ Սուրեն Ներսիսյանը, Հովհաննես Բարսեղյանը, Միքայել Մարտիրոսյանը:

«Երիտասարդների երկիր» ՀԿ-ն երկու տարում պետությունից ստացել է ավելի քան 27 միլիոն դրամ: Հիմնադիրներ՝ Սուրեն Ներսիսյան, Հովհաննես Բարսեղյան, Արա Հովսեփյան:

«Կրթված սերունդ կրթական ասոցիացիա» ՀԿ-ն երկու տարում պետությունից ստացել է ավելի քան 22 միլիոն դրամ: Հիմնադիրներ՝ Սուրեն Ներսիսյան, Անուշ Ավանեսյան, Վալենտինա Գեւորգյան:

«Մեր ուժը մեր երիտասարդությունն է» երիտասարդական ՀԿ. երկու տարում՝ 23 միլիոն դրամ: Հիմնադիրներ՝ Սուրեն Ներսիսյան, Հովհաննես Բարսեղյան, Միքայել Մարտիրոսյան:

«Կանայք առաջնորդ» ՀԿ՝ 23 միլիոն դրամ: Հիմնադիրներն են՝ Սուրեն Ներսիսյանը, Ինգա Հարությունյանը, Էդուարդ Հարությունյանը:

Մի շարք ՀԿ-ներ էլ, որոնց մասին համացանցում տեղեկություններ չկան, այնքան հաջողակ են, որ հասցրել են 2012 թվականին գրանցվել Պետռեգիստրում եւ նույն տարին պետությունից միլիոններ ստանալ:

«Առողջապահական ֆորում» ՀԿ. Պետռեգիստրում գրանցվել է 2012 թ. հունվարի 11-ին եւ նույն տարում պետությունից ստացել 13,120 միլիոն դրամ: Կազմակերպության հիմնադիրներն են՝ Միքայել Մարտիրոսյանը, Հովհաննես Բարսեղյանը, Ինգա Հարությունյանը:

«Հանուն առողջության դաշինք» ՀԿ՝ գրանցվել է նույն օրը, ինչ «Առողջապահական ֆորում» ՀԿ-ն եւ նույն տարում պետությունից ստացել 13,9 միլիոն դրամ: Հիմնադիրներ՝ Միքայել Մարտիրոսյան,

Հովհաննես Բարսեղյան, Ինգա Հարությունյան:

«Հասարակության առողջության պահպանման ասոցիացիա» ՀԿ-ն նույնպես գրանցվել է նույն օրը, ինչ «Առողջապահական ֆորում» ՀԿ-ն եւ նույն տարում պետությունից ստացել 11,8 միլիոն դրամ: Հիմնադիրներն են Հովհաննես Բարսեղյանը, Ինգա Հարությունյանը, Էդուարդ Հարությունյանը:

«Մայրերը՝ հանուն առողջ ապագայի» ՀԿ. գրանցվել է նույն օրը, ինչ «Առողջապահական ֆորում» ՀԿ-ն եւ դարձյալ նույն տարում պետությունից ստացել 13,6 միլիոն դրամ: Հիմնադիրներ՝ Հովհաննես Բարսեղյան, Ինգա Հարությունյան, Էդուարդ Հարությունյան:

«Կանանց հասարակական միավորում» ՀԿ՝ գրանցված 2012 թ. ապրիլի 17-ին, նույն տարում պետությունից ստացել է 12,6 միլիոն դրամ: Հիմնադիրներն են Հովհաննես Բարսեղյանը, Ինգա Հարությունյանը, Արամայիս Սահակյանը:

ՀԳ - Նյութում ներկայացված բոլոր տվյալները հրապարակված են պաշտոնապես:

Աղբյուրը՝ *hraparak.am*

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հարցումը և ՀՀ Ֆինանսների նախարարության տրամադրած պատասխանը կարող եք գտնել այստեղ՝

<http://givemeinfo.am/hy/case/1164/>

Նախագահականից դրամաշնորհներ ստացած կազմակերպությունները չեն հայտնաբերվում

«Շատ զարմանալի է, որովհետեւ այսօր ընդհանրապես ցանկացած կազմակերպություն ավելի շահագրգռված է, որ հնարավորինս շատ մարդ իրենց մասին իմանա: Մինչդեռ այս հի-ները փորձում են ստվերում մնալ: Նույն հի-ները երեք տարի շարունակ ֆինանսավորում էին ստացել: Դրան հաջորդեց նաեւ լրագրողների մյուս բացահայտումը, որ դրանք հենց այդ նույն տարում են հիմնադրվել եւ ֆինանսավորում ստացել, ինչը նույնպես հակասում է ֆինանսավորման սկզբունքներին», - ասաց Դոյոյանը:

2010-2012 թվականներին Հայաստանի նախագահի աշխատակազմից 500 միլիոն դրամի չափով դրամաշնորհներ տրամադրելու կապակցությամբ Հայաստանի նախագահի մամուլի խոսնակ Արման Սաղաթեյանն, ի պատասխան «Ազատություն» ռադիոկայանի գրավոր հարցերին, նշել է, որ «դրամաշնորհային ծրագրի իրականացման ընթացքի նկատմամբ վերահսկողություն է իրականացնում Հայաստանի նախագահի աշխատակազմի եւ գործընկեր հասարակական կազմակերպության համատեղ ձեւավորած մոնիտորինգի հանձնաժողովը»:

«Եթե հանձնաժողովը մշտապես քննության է առնում յուրաքանչյուր ծրագրի արդյունավետությունը, ապա արդեն իսկ եղած արդյունքներով սկսվել են ընդհանուր ծրագրի զարգացման վերաբերյալ քննարկումներ, որոնք նպատակ ունեն ապահովել նախաձեռնության սահուն անցումը սկզբնական փուլից դեպի ավելի ծրագրային ու զարգացման հարթություն», - դրամաշնորհների ծախսի արդյունավետության վերաբերյալ հարցերին այսպես է պատասխանել նախագահի խոսնակը:

31 հասարակական կազմակերպություններին նախագահի աշխատակազմի տրամադրած 500 միլիոն դրամի ծախսի արդյունավետության հարցը հանրային ուշադրությանն արժանացավ վերջերս, երբ «Ինֆորմացիայի ազատության կենտրոնը» ֆինանսների նախարարի տեղակալ, գլխավոր գանձապետ Ատոմ Զանցուղազյանից ստացավ պաշտոնական պատասխան դրամաշնորհների վերաբերյալ:

2011 եւ 2012 թվականներին 27 միլիոն դրամի դրամաշնորհ ստացած «Արբանյակ» կազմակերպությունը, որը պաշտոնական փաստաթղթի հա-

մաձայն, իրավապաշտպան հասարակական կազմակերպություն է: Այն, ըստ պետական ռեգիստրի տվյալների, գործում է Երեւանում՝ Եզնիկ Կողբացու 29, բնակարան 2Ա հասցեում: Տվյալ հասցեում որեւէ ցուցանակ չկա: Շենքը հյուրատան մնան էր, մենեջերն ասաց՝ անհնար է, գնալ այդ բնակարան: Մենեջերը չհիշեց, որ այդ շենքում երբեւէ գործել է «Արբանյակ» հի-ն:

Ըստ պետական ռեգիստրի, այս նույն հասցեում է գործում նաեւ «Երիտասարդների երկիր» առողջապահական հասարակական կազմակերպությունը, որը, ըստ գլխավոր գանձապետի գրությամբ կից փաստաթղթի, Հայաստանի նախագահի աշխատակազմից 2011 եւ 2012 թվականներին արժանացել է ավելի քան 27 միլիոն դրամի դրամաշնորհի: Մենեջերը այս դեպքում եւս շեշտեց, որ նման կազմակերպություն այս հասցեում չի գործել:

Պետռեգիստրի ներկայացուցիչը զարմանքով հայտնեց պաշտոնական փաստաթղթում նշված եւ պետբյուջեից դրամաշնորհ ստացած մեկ այլ՝ «Կրթված սերունդ կրթական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հասցեն՝ այս անգամ Եզնիկ Կողբացու 2Ա, բնակարան 29. - «Ո՛նց որ թարս է գրված», - զարմացավ նա:

Կողբացու 2Ա, բնակարան 29 հասցեում, պարզվեց՝ վարձով ապրողներ են հայտնվում ժամանակ առ ժամանակ: 50 տարի այնտեղ բնակվող հարեւաններն ասացին՝ երբեք չեն նկատել հասարակական կազմակերպությանը, ցուցանակ եւս չկար:

Շարունակելով Հայաստանի նախագահի աշխատակազմից դրամաշնորհներ ստացող կազմակերպությունների փնտրտուքը, հիմք ընդունելով պետռեգիստրում գրանցված հասցեն, գնացինք

նաեւ Բուռնագյան 70 տուն: Ըստ պետռեզիստրի, այս հասցեում են գրանցված «Մեր ուժը մեր երիտասարդությունն է» երիտասարդական կազմակերպությունը, ինչպես նաեւ «Մեր երկրի ապագան» հասարակական կազմակերպությունը, որը, ըստ գանձապետի գրությանը կից փաստաթղթի, իրավապաշտպան հասարակական կազմակերպություն է: «Մեր ուժը մեր երիտասարդությունն է» կազմակերպությունը 2011-2012 թվականներին ստացել է ավելի քան 23 միլիոն դրամ, իսկ «Մեր երկրի ապագան մեր ձեռքերում է» կազմակերպությունը՝ մոտ 27 միլիոն դրամ: Բայց այդ հասցեում կիսաքանդ տուն էր: Այստեղ եւս չեն նկատել հասարակական գործունեությանը զբաղվողների:

Նախագահականից դրամաշնորհներ ստացողների գործունեությանը անցած շաբաթներին ապարդյուն է հետաքրքրվել «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» ղեկավար Շուշան Դոյրոյանը: Ասաց՝ որեւէ տվյալ չի գտել:

«Շատ զարմանալի է, որովհետեւ այսօր ընդհանրապես ցանկացած կազմակերպություն ավելի շահագրգռված է, որ հնարավորինս շատ մարդ իրենց մասին իմանա: Մինչդեռ այս հկ-ները փորձում են ստվերում մնալ: Նույն հկ-ները երեք տարի շարունակ ֆինանսավորում էին ստացել: Դրան հաջորդեց նաեւ լրագրողների մյուս բացահայտումը, որ դրանք հենց այդ նույն տարում են հիմնադրվել եւ ֆինանսավորում ստացել, ինչը նույնպես հակասում է ֆինանսավորման սկզբունքներին», - ասաց Դոյրոյանը:

Լրագրողները նաեւ բացահայտել են, որ այդ հասարակական կազմակերպություններից մի քանիսի («Արբանյակի», «Կրթված սերունդ կրթական ասոցիացիայի» եւ եւս մի քանիսի) հիմնադիրների անունները համընկնում են:

«Կարող են պնդել, որ դրանք իշխանության տարբեր ներկայացուցիչների մտերիմներ են, հարազատներ են, բարեկամներ են, կամ իշխանական կուսակցությունների երիտասարդ կարիերիստներից մի քանիսն են», - պնդեց տնտեսական մեկնաբան Հայկ Գեւորգյանը:

Գեւորգյանը մշտապես ուսումնասիրում է պետբյուջեի նախագծերն ու կատարողականները: Մեկնաբանը պնդեց, որ Հայաստանում շատ ու շատ ուղորտներ ֆինանսների բացակայության պատճառով շատ հաճախ տուժում են, տուժում են նաեւ մարդկային կյանքեր:

«Հիշենք այն զինվորին, որին տեղափոխեցին Մոսկվա վիրահատության համար, ընդամենը 20 միլիոն դրամ էր հարկավոր կյանքը փրկելու համար, չգտան այդ փողը», - նշեց նա:

Գյումրիի «Ասպարեզ» ակումբի նախագահ Լեւոն Բարսեղյանը նույնպես հարցումներ է ուղարկել՝ դրամաշնորհների արդյունավետության առնչությամբ:

«Անհասկանալի է, թե ինչպես նորաստեղծ հասարակական կազմակերպությունները վրա-վրա այդ գումարները ստանում էին պետությունից, եւ իրենց գործունեության մասին հանրային լայն իրազեկում չկա», - ասաց Բարսեղյանը:

Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի համանախագահ, Հայաստանի զգային համակարգող Բորիս Նավասարդյանը դրամաշնորհների տրամադրման փաստերը չառանձնացրեց պետական մյուս մրցույթներից:

«Գիտենք, ինչպես է բաժանվում ցանկացած պետական տեղեր, նույն կերպ էլ՝ դրամաշնորհները», - ասաց նա՝ հավելելով, որ քաղաքացիական հասարակության զարգացման համար անհրաժեշտ է սահմանափակել պետական պաշտոնյաների միջամտությունը հասարակական կազմակերպություններին ֆինանսավորելիս:

Աղբյուրը՝ Ազատություն ռադիոյայան

305 մլն դրամ բյուջեից՝ որպես պարգևատրում

30 պետական կառույցներից ամենաշատ գումարը ծախսել է ՀՀ առողջապահության նախարարության Պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչությունը՝ 79.870.500 ՀՀ դրամ: Երկրորդ մարմինը ՀՀ գյուղատնտեսության նախարարության Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունն է, որի աշխատակիցները 2011թ.-ին պարգևատրվել են ընդհանուր 50.334.700 ՀՀ դրամով:

2012թ.-ի մայիսի 29-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հարցումներ ուղարկեց մի շարք պետական կառույցների՝ պարգելու, թե որքանով այս մարմիններն արդարացի եւ հիմնավորված են ծախսում պետական բյուջեի միջոցները: Այս հարցումները միեւնույն ժամանակ հնարավորություն տվեցին պարզել, թե ինչպես են պետական մարմինները կիրառում տեղեկատվության ազատության մասին օրենսդրությունը:

Հարցումներն ուղղվել էին ՀՀ նախարարությունների՝ թվով 30 առանձնացված ստորաբաժանումների՝ տեսչությունների, գործակալությունների, նախարարությունների ենթակայության տակ գտնվող պետական ոչ առետրային կազմակերպությունների եւ պետական հիմնարկների: Հարցմամբ ԻԱԿ-ը խնդրել էր հայտնել.

1. Ստացե՞լ են արդյոք պարգևատրումներ (պարգևավճարներ, նվերներ) տվյալ մարմնի աշխատակիցները 2011թ.-ին,
2. Եթե այո, ապա ովքե՞ր են պարգևատրվել (ըստ հաստիքների) եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով),
3. Որքա՞ն է կազմել տվյալ մարմնի աշխատակիցների ստացած դրամական պարգևատրումների ընդհանուր գումարը,
4. Որքա՞ն է կազմել տվյալ մարմնի աշխատակիցների ստացած նվերներից յուրաքանչյուրի արժեքը եւ նվերների արժեքների ընդհանուր գումարը:

Պարգևատրումները

Պարգևատրումների չափի ընդհանուր համեմատությունը կներկայացնենք առանց հաշվի առնելու այդ պարգևատրումը ստացած անձանց քանակը, քանի որ ԻԱԿ-ի հարցումներին տարբեր մարմիններ տարբեր կերպ են պատասխանել. որոշները տրամադրել են թերի պատասխաններ՝ ամբողջ տարվա համար ընդհանուր նշելով պարգևատրում ստացածների թիվն ու պարգևատրման ընդհանուր թիվը: Որոշներն էլ տրամադրել են լիարժեք պատասխաններ, սակայն տարբեր ձեւակերպումներով, օրինակ՝ տարբերակելով աշխատակիցների ստացած պարգևատրումների տեսակները կամ ներկայացնելով պարգևատրումները ըստ կիսամյակների կամ ամիսների:

Նախ նշենք, որ ԻԱԿ-ը խնդրել էր պարգևատրում ստացած աշխատակիցների մասին տեղեկություն ըստ հաստիքների, այսինքն՝ ոչ անվանական: Սակայն մի շարք մարմիններ ԻԱԿ-ի խնդրած տեղեկությունների տրամադրումը համարել են իրենց աշխատակիցների անձնական կյանքի անձեռնմխելիության խախտում: 2012թ. հունիսի 13-ին ԻԱԿ-ը պարզաբանման համար դիմեց ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ: Ի պատասխան՝ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը 2012թ. հունիսի 20-ի գրությամբ պատասխանեց, որ քաղաքացիական ծառայողների ստացած պարգևատրումների արժեքի մասին տեղեկատվության տրամադրման սահմանափակումներ չկան (տես՝ <http://givemeinfo.am/hy/case/985/>):

Մի կողմից այն, որ քաղաքացիական ծառայողների ստացած պարգևատրումների արժեքի մասին տեղեկատվության տրամադրման սահմանափակումներ չկան եւ մյուս կողմից էլ այն, որ ԻԱԿ-ը տեղեկությունները խնդրել է ըստ հաստիքների՝ ոչ անվանական, ցույց են տալիս, որ պահանջվող տեղեկությունը չի կարող խախտել անհատական

քաղաքացիական ծառայողի անձնական կյանքի անձեռնմխելիությունը. տեղեկություն տնօրինողները կարող էին տրամադրել պարզեատրումների չափերն ըստ հաստիքների, ըստ հաստիքների խմբերի (այսինքն՝ նշելով հաստիքի անվանումը, այդ նույն հաստիքը զբաղեցնող եւ նույն չափի պարզեատրում ստացած աշխատակիցների թիվը, պարզեատրման չափը)՝ անգամ առանց բացահայտելու աշխատակիցների անունները:

ԻԱԿ-ից հարցումներ ստացած վերոնշյալ 30 պետական կառույցներից ամենաշատ գումարը ծախսել է 33 առողջապահության նախարարության Պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչությունը՝ 79.870.500 33 դրամ:

Երկրորդ մարմինը 33 գյուղատնտեսության նախարարության Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունն է, որի աշխատակիցները 2011թ.-ին պարզեատրվել են ընդհանուր 50.334.700 33 դրամով:

2011թ. ընթացքում ամենաքիչ պարզեատրումը ստացել են 33 քաղաքաշինության նախարարության «Լիցենզավորման կենտրոն» գործակալության աշխատակիցները՝ 1.406.266 33 դրամ: Այս գործակալությանը հաջորդում է 33 էկոնոմիկայի նախարարության Լիցենզավորման եւ թույլտվությունների գործակալությունը՝ 2.085.581 33 դրամ պարզեատրումների ընդհանուր գումարով:

33 նախարարությունների մնացած առանձնացված ստորաբաժանումների աշխատակիցների ստացած ընդհանուր պարզեատրումների չափը տատանվում է 2.508.000 33 դրամից 31.894.100 33 դրամի սահմաններում:

Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը թերի է պատասխանել հարցմանը՝ չտրամադրելով տեղեկություն պարզեատրվածների մասին: Ուստի, անհնար է եղել վերհանել, թե որքան է կազմել ծառայության 1 աշխատակցի պարզեատրման միջին չափը: Իսկ Պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչությունը նշել է, որ 79.870.500 33 դրամ ընդհանուր գումարով պարզեատրվել է 351 աշխատակից: Այսինքն, 1 աշխատակցի պարզեատրման միջին չափը կազմել է 227.551 33 դրամ:

1.406.266 33 դրամ պարզեատրումը «Լիցենզավորման կենտրոն» գործակալությունում ստացել են 6 աշխատակիցներ (1 աշխատակցի պարզեատրման միջին չափը՝ 234.378 33 դրամ), իսկ 2.085.581 33 դրամ պարզեատրում Լիցենզավորման եւ թույլտվությունների գործակալությունում ստացել են 5 աշխատակիցներ (1 աշխատակցի պարզեատրման միջին չափը՝ 417.116 33 դրամ):

Ինչպես տեսանք, ստացվեց այնպես, որ ամենաքիչ ընդհանուր պարզեատրում ունեցած մարմինների 1 աշխատակցի պարզեատրման միջին չափն ավելի շատ է, քան ամենաշատ ընդհանուր պարզեատրում ունեցած մարմնի 1 աշխատակցի պարզեատրման միջին չափը:

33 էկոնոմիկայի նախարարության 33 հավատարմագրման գործակալությունն ու 33 տրանսպորտի եւ կապի նախարարության «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ը նշել են, որ իրենց աշխատակիցները 2011թ. ընթացքում որեւէ պարզեատրում չեն ստացել:

ԻԱԿ-ի հարցմանն ըստ էության պատասխան տրամադրած մարմինների հաշվարկով (տես՝ աղյուսակ 2) պարզեատրումների ընդհանուր գումարը կազմել է 305.448.727 33 դրամ:

Նշենք, որ հարցման ենթարկված մարմիններից որեւէ մեկի աշխատակիցները 2011թ. ընթացքում նվեր չեն ստացել:

Պատասխանների բովանդակությունը SU տեսանկյունից

2011թ. մարտի 29-ին ուղարկված՝ ԻԱԿ-ի 30 հարցումներից ոչ մեկն անպատասխան չի մնացել: Ուղարկված 30 հարցումներից 8-ին (27%) տրվել է լիարժեք պատասխան, որոնցից 6-ին՝ ժամանակին լիարժեք, 2-ին՝ ուշացած լիարժեք պատասխան: 14 (46%) հարցման դեպքում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ստացել է թերի պատասխան: Եվս 8 (27%) հարցման դեպքում տեղեկատվություն տնօրինող մարմինը հղում է արել նախարարությանը՝ հայտնելով, որ պահանջվող տեղեկություններն իրենք չեն տնօրինում, եւ դրանք անհրաժեշտ է ստանալ համապատասխան նախարարության աշխատակազմից:

Առանձնակի ուշադրության է արժանի 33 առողջապահության նախարարության Պետական առող-

ջապահական գործակալության հղումը: Պատասխան գրությամբ գործակալությունը հայտնել է, որ իր աշխատակիցները 2011թ. որեւէ նվեր չեն ստացել, իսկ պարզեւալճարների մասին տեղեկատվությունը կարող է տրամադրել ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմը, քանի որ գործակալությունը հանդիսանում է նախարարության առանձնացված ստորաբաժանում: Սակայն, հղում անելով նախարարությանը, գործակալությունը նաեւ սեփական նախաձեռնությամբ ԻԱԿ-ի հարցումը վերահասցեագրել է ՀՀ ԱՆ աշխատակազմի ղեկավարին՝ խնդրելով ԻԱԿ-ին տրամադրել այն տեղեկությունները, որոնք գործակալությունը չէր կարողացել տրամադրել: Արդյունքում, ԻԱԿ-ը ՀՀ առողջապահության նախարարությունից պատշաճ պատասխան էր ստացել (տես՝ <http://givemeinfo.am/hy/case/954/>):

Թեւ որեւէ հարցում անպատասխան չի մնացել, սակայն բավական շատ էին թերի պատասխանները (46%): Պատճառն այն էր, որ տեսչությունները, գործակալությունները, ՊՈԱԿ-ները եւ ՊՀ-ները խուսափել էին տրամադրել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի խնդրած՝ տվյալ մարմնի՝ պարզևատրում ստացած աշխատակիցների եւ յուրաքանչյուրի ստացած դրամական պարզևատրումների չափի մասին տեղեկությունները (2-րդ, երբեմն նաեւ 3-րդ հարցերի պատասխանը)՝ համարելով, որ այդպիսով կխախտեն իրենց աշխատակիցների անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ստացված պատասխանները համարել էր թերի եւ 2012թ. հունիսի 23-ին կրկնակի հարցումներ էր ուղարկել թերի պատասխան տրամադրած բոլոր 14 մարմիններին: Կրկնակի 14 հարցումներից 4-ը կրկին անհիմն մերժվել են: 3 հարցում մնացել են անպատասխան, իսկ մնացած 7 կրկնակի հարցումներին տրվել է լիարժեք պատասխան:

Անհիմն մերժման հեղինակներն են ՀՀ արդարադատության նախարարության Իրավական ակտերի փորձաքննության գործակալությունը, ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն, ՀՀ ֆինանսների նախարարության Լիցենզավորման գործակալությունը եւ Ֆինանսական վերահսկողության տեսչությունը: Այս կառույցների

դեմ ԻԱԿ-ը 2012-ին նախաձեռնել է դատական գործընթացներ՝ դատական կարգով վիճարկելու անհիմն մերժումները (Պատական գործերի մասին ավելի մանրամասն տես՝

<http://foi.am/hy/all-cases/item/1052/>,
<http://foi.am/hy/all-cases/item/1053/>):

ՀՀ ԱԴ Իրավական ակտերի փորձաքննության գործակալությունն ի պատասխան ԻԱԿ-ի կրկնակի հարցման՝ նշել է, որ իրավասու չէ տրամադրել գործակալության աշխատակիցների դրամական պարզևատրումների չափի մասին տեղեկատվություն՝ համարելով դա մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքի ոտնահարում: Սակայն, ինչպես արդեն նշեցինք, ԻԱԿ-ը կրկնակի հարցմամբ պատճառաբանել էր, թե ինչու իր խնդրած տեղեկությունները մարդու անձնական եւ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը չեն ոտնահարում: Փոխարենը, Իրավական ակտերի փորձաքննության գործակալությունը որեւէ կերպ չէր մեկնաբանել կամ պատճառաբանել, թե ինչ պատճառներով հաշվի չի առել ԻԱԿ-ի փաստարկները: ԻԱԿ-ը գործակալության մերժումը համարել է անհիմն:

Հաջորդ երկու անհիմն մերժումների հեղինակը ՀՀ Ֆինանսների նախարարությունն է, որը մեկ գրությամբ պատասխանել է Լիցենզավորման գործակալությանը եւ Ֆինանսական վերահսկողության տեսչությանն ուղղված կրկնակի հարցումներին: Ի պատասխան ԻԱԿ-ի կրկնակի հարցման այն փաստարկի, որ աշխատակիցների պարզևալճարների մասին տեղեկությունները խնդրվել են ըստ հաստիքների՝ նախարարությունը, միեւնույն է, մերժել է տրամադրել խնդրվող տեղեկությունները: Նախարարությունը նշել էր, որ խնդրվող տեղեկությունները տրամադրելու համար անհրաժեշտ են աշխատողների համաձայնությունները, բացի այդ նույնիսկ եթե ԻԱԿ-ի խնդրած տեղեկատվությունը տրամադրվի ըստ հաստիքների, ապա հաշվի առնելով Լիցենզավորման գործակալության եւ Ֆինանսական վերահսկողության տեսչության աշխատակիցների փոքրաքանակ թիվը՝ այդ տեղեկատվությունը կդիտվի որպես անվանական:

Դիտարկելով նախարարության պատասխանը տեղեկատվության ազատության հիմնարար իրավունքի տեսանկյունից՝ ԻԱԿ-ն այն համարել է անհիմն մերժում հետեւյալ պատճառաբանությամբ.

հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեսչության եւ գործակալության աշխատակիցները փոքրաթիվ են, նախարարությունը կարող էր ստանալ յուրաքանչյուրի համաձայնությունը կամ անհամաձայնությունը: Սակայն, մերժելով ԻԱԿ-ի խնդրած տեղեկությունների տրամադրումը, պատասխան գրությամբ նախարարությունը որեւէ բան չի նշել այն մասին՝ արդյոք այդ համաձայնությունը խնդրվել է, թե ոչ: ԻԱԿ-ը հիմնավոր կհամարեր նախարարության մերժումը, եթե նախարարությունը ստանար տեսչության եւ գործակալության աշխատակիցների անհամաձայնությունը եւ այդ հիմքով մերժեր տեղեկատվության տրամադրումը, այսինքն, եթե մերժումը հիմնված լիներ գործողության, այլ ոչ թե անգործության վրա: Այս դեպքում, ԻԱԿ-ը նախարարության մերժումը համարել է անհիմն. միգուցե աշխատակիցներից ոմանք համաձայնեի՞ն տրամադրել խնդրվող տեղեկությունները:

Վերջին անհիմն մերժման հեղինակը ՀՀ Բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն է, որն ի պատասխան ԻԱԿ-ի կրկնակի հարցման՝ նույնպես նշել էր ՊՀ-ի աշխատակիցների համաձայնության անհրաժեշտությունը խնդրվող տեղեկությունները տրամադրելու համար: Սակայն, ի տարբերություն ՀՀ ֆինանսների նախարարության, ՊՀ-ն չի անդրադարձել ԻԱԿ-ի կրկնակի հարցման այն փաստարկին, որ տեղեկությունները խնդրվում են ըստ հաստիքների, այլ ոչ անվանական, չի նշել, թե ինչ պատճառով է անհնար տրամադրել ՊՀ-ի աշխատակիցների ստացած պարզեւավճարների մասին տեղեկություններն ըստ հաստիքների: Այս մերժումը նույնպես համարվել է անհիմն:

Նշենք նաեւ 3 լուռ մերժումների հեղինակներին. ԻԱԿ-ի կրկնակի հարցումն անպատասխան են թողել ՀՀ առողջապահության նախարարության Պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային հսկողության տեսչությունը, ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ը եւ ՀՀ գյուղատնտեսության նախարարության Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը:

Նշենք, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հեռախոսազանգի միջոցով փորձել է ճշտել արդյոք վերոնշյալ 3 մարմինները ստացել են կրկ-

նակի հարցումները եւ եթե այո, ապա որոնք են հարցումներն անպատասխան թողնելու պատճառները: Միայն ՀՀ առողջապահության նախարարության Պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային հսկողության տեսչությունն է հայտնել, որ կրկնակի հարցումը չեն կարողանում գտնել, հավանաբար չեն ստացել: Նշենք, որ ԻԱԿ-ը հարցումներն ուղարկել է փոստային ծառայության միջոցով՝ պատվիրված նամակով: Մյուսները հայտնել են, որ կրկնակի հարցումը ստացել են, սակայն ինչ-ինչ պատճառներով դեռ չեն ուղարկել: Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հարցումներն անպատասխան թողած վերոնշյալ մարմինների ղեկավարները (բացառությամբ ՀՀ առողջապահության նախարարության Պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային հսկողության տեսչության՝ քանի որ այս մարմինը բանավոր հայտնել է, որ հարցումը չի ստացել) հայտնվել են ԻԱԿ-ի՝ տեղեկություն ստանալու իրավունքը խախտած պաշտոնյաների սեւ ցուցակում (տես՝ <http://foi.am/hy/years/>):

Այս մարմինների դեմ ԻԱԿ-ը դատական գործընթաց չի սկսել հետեւյալ պատճառաբանությամբ. ԻԱԿ-ն իրականացնում է ռազմավարական դատավարություն, նախաձեռնում է դատական գործեր, որոնցում ընկած իրավական վեճը այս կամ այն չափով նոր բնույթ է կրում, նախկինում չի մեկնաբանվել դատարանների կողմից եւ չկա կամ բավարար չափով չկա այդ վեճի լուծման վերաբերյալ ձեւավորված դատական պրակտիկա: Այս առումով՝ վերոնշյալ մարմինների դեմ դատական գործեր նախաձեռնելը նպատակահարմար չէր, քանի որ լուռ մերժումների վրա հիմնված դատական գործեր ԻԱԿ-ը բազմիցս է նախաձեռնել, եւ այդպիսի գործերի լուծման հեռանկարները կանխատեսելի են: Նման դեպքերում որպես կանոն դատական գործի ընթացքում տեղեկություն տնօրինող տրամադրում է խնդրվող տեղեկությունները, եւ դատական գործընթացը կորցնում է իր իմաստը: Ուստի, այս դեպքում ԻԱԿ-ը նախընտրեց այս մարմինների դեմ դատական գործ նախաձեռնելու համար անհրաժեշտ ռեսուրսներն ուղղել ռազմավարական առավել կարելու դատական գործերի:

Պատասխանների ժամկետները

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ տե-

ղեկությունն ստանալու գրավոր հարցմանը պատասխան պետք է տրվի այն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում: ԻԱԿ-ը հարցումներն ուղարկել է փոստով: Ուստի, պատասխանը չի համարվել ժամկետ խախտած, եթե տրամադրվել է 9 օրացույցային օրվա ընթացքում, որոնցից 5 օրը օրենքով սահմանված ժամկետն է, 2 օրը հաշվարկվել է որպես փոստային առաքման ժամկետ և ևս 2 օրը ոչ աշխատանքային օրերն են՝ շաբաթ և կիրակի: Ամեն դեպքում, ամճշտություններից խուսափելու համար ժամկետները հաշվարկելիս որպես հիմք ընդունվել են հարցումներն ուղարկելու օրը և պատասխան գրության ծրարի վրա փոստային ծառայության կնիքի վրա նշված՝ պատասխան գրությունն ուղարկելու օրը:

Ինչպես նշվեց՝ ուղարկվել է 30 հարցում, ապա եւս 14 կրկնակի հարցում: Այսպես, 44 հարցումներից 3-ը (7%) մնացել են անպատասխան, 22-ին (50%) պատասխան տրամադրվել է ժամանակին, իսկ 19-ին (43%)՝ ժամկետների խախտմամբ:

Լավագույն արդյունքը ժամկետների առումով ցույց են տվել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Պետական ռեզերվների գործակալությունը եւ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ-ը, որոնք ԻԱԿ-ի հարցմանը լիարժեք պատասխանել են հարցումն ուղարկելուց 2 օր հետո: Ժամկետների առումով

լավագույններից են նաեւ ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի լիարժեք եւ ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի թերի պատասխանները, որոնք ներկայացվել են հարցումն ուղարկելուց 3 օր հետո:

Վատագույն արդյունքը ՀՀ սփյուռքի նախարարության «Հայրենիք-սփյուռք կենտրոն» ՊՈԱԿ-ն է, որն ԻԱԿ-ի հարցմանը լիարժեք պատասխան է տրամադրել հարցումն ուղարկելուց 2 ամիս 9 օր հետո:

ԻԱԿ-ի հարցումներին տրված պատասխանների ժամկետների հաշվարկով՝ տեսչությունները, գործակալությունները, ՊՈԱԿ-ները եւ ՊՀ-ները ԻԱԿ-ի հարցումներին պատասխանել են միջինը 11 օրում:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի ուղարկած բոլոր հարցումների պատասխանների բովանդակությանը եւ ժամկետներին կարող եք ծանոթանալ ներկայացված աղյուսակ 1 և 2-ում՝ <http://www.foi.am/hy/research/item/1187/>:

ՏՎԽ կարծիքը Սուսաննա Բաղդասարյանը «Հայք» թերթի խմբագրության, «Հայք» թերթի թղթակից Արման Գալոյանի, Սվետլանա Առաքելյանի դեմ հայցի վերաբերյալ

2013 թվականի մարտի 5-ին Տեղեկատվական վեճերի խորհուրդը հրապարակել է Սուսաննա Բաղդասարյանը «Հայք» թերթի խմբագրության, թերթի թղթակից Արման Գալոյանի, Սվետլանա Առաքելյանի դեմ հայցի վերաբերյալ իր կարծիքը:

1. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

«Հայք» թերթի 2008 թվականի փետրվարի 8-ի թիվ 24 (1503) համարում հրապարակվել է թերթի թղթակից Արման Գալոյանի հոդվածը՝ վերնագրված «Սպանության հետքերով», որտեղ տեղ են գտել մասնավորապես հետևյալ տեղեկությունները.

«Խոսքը «Ամարոպ» ՄՊԸ-ին պատկանող Արենի գյուղի հարևանությամբ գտնվող քարհանքի պահակ, այդ գյուղի բնակիչ 34-ամյա Կարեն Մանուկյանի սպանության մասին է: Վերջինիս կինը պատմում է, որ 2007 թվականի օգոստոսի 18-ին Կարենը երեկոյան դուրս է եկել տանից ու այլևս չի վերադարձել: ... Մեր հարցին, թե ո՞րն է սպանության պատճառը, սպանվածի այրին պատմեց, որ Գեղամ Բաղդասարյանը Կարենին կասկածել է իր թոռան՝ Հայկի մահվան մեջ: Հայկը մահացել էր 2006 թ. փետրվարին թմրանյութ օգտագործելիս: «Գեղամը համոզված էր, որ Կարենն է նրան սովորեցրել թմրանյութ օգտագործել, բայց Կարենը կյանքում չգիտեր ինչ բան է թմրանյութը: Բացի այդ, երբ Հայկը եկավ Ռուսաստանից, արդեն թմրամոլ էր: Բոլորը դա գիտեին. նույնիսկ նրա հայրը, որ եկավ թաղմանը, ասում էր՝ ինքը գիտի, որ իր տղան վաղ թե ուշ մեռնելու է», -ասում է Կարինեն...»:

19.08.2010թ. հանգուցյալ Հայկ Բաղդասարյանի մայրը՝ Սուսաննա Բաղդասարյանը (այսուհետ՝ Հայցվոր) դիմել է դատարան Յոզվածուն հրապարակված, հանգուցյալ որդու հիշատակը պղծող, բարի համբավն ու անունն արատավորող տեղեկությունները հերքելու պահանջի մասին հայցադիմումով:

Հաշվի առնելով արատավորող տեղեկությունները Սվետլանա Առաքելյանի կողմից հայտնած լինելու հանգամանքը՝ հայցվորը հայցապահանջը հղել է նաև գործով պատասխանող ներգրավված Սվետլանա Առաքելյանի նկատմամբ:

27.09.2011թ. քննելով ԵԿԴ-1708/02/10 քաղաքացիական գործը՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը որոշել է հայցը բավարարել մասնակի՝ պարտավորեցնելով Սվետլանա Առաքելյանին՝ հերքելու «Հայք» թերթի 2008 թվականի փետրվարի 8-ի թիվ 24 (1503) համարում հրապարակված «Սպանության հետքերով» խորագրով հոդվածում Հայկ Բաղդասարյանի պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունները և հերքումը տպագրել «Հայք» թերթում:

2. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Սույն գործի ուսումնասիրությունից պարզվեց, որ հայցադիմումի համար հիմք հանդիսացած տեղեկությունները հրապարակվել են «Հայք» թերթի 2008 թվականի փետրվարի 8-ի թիվ 24 (1503) համարում, իսկ դատարանը գործն ընդունել ու քննել է 2010-2011 թվականների ընթացքում: Ընդ որում, դատարանը գործի քննությունը կատարել է մինչև Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի ընդունումը և, համապատասխանաբար, նույն օրենսգրքի 19-րդ հոդվածի փոփոխությունները: Այսինքն՝ դատարանը գործը քննել ու լուծել է հին իրավակարգավորման ներքո՝ Քաղաքացիական օրենսգրքի նախկին 19-րդ հոդվածի հիմքով: Ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանու-

թյան վրա, որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն ընդհանուր կանոն է, իսկ այդ ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում տվյալ օրենքով պետք է սահմանված լինի տվյալ ակտին հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթ: ԶՅ քաղաքացիական օրենսգրքի 5-րդ հոդվածը սահմանում է վերը նշված ընդհանուր կանոնը, իսկ նույն հոդվածի այլ դրույթներով վիրավորանքի ու զրպարտության իրավահարաբերությունների մասով որևէ բացառություն սահմանված չէ: Զետևաբար, 2008 թվականին ծագած իրավահարաբերությունների լուծումը նախկին օրենսդրական կարգավորմամբ բխում է օրենսդրության և սահմանադրական նորմերի պահանջից:

Խորհուրդը գտնում է, որ խնդրահարույց է դատարանի որոշման եզրափակիչ մասը, որով դատարանը կիրառել է խախտված իրավունքը վերականգնելու այնպիսի եղանակ, որը հնարավոր չէր կիրառել: ԵԿԴ-1708/02/10 քաղաքացիական գործով վճռով պատասխանող Սվետլանա Առաքելյանի համար սահմանվել է որոշակի գործողություն կատարելու, այն է՝ «Զայք» թերթում սահմանված կարգով հերքում հրապարակելու պարտավորություն, սակայն այնուհետև պարզվել է, որ թերթը 2010 թվականի հուլիսից լույս չի տեսնում, ուստի նշված պարտավորությունը կատարելն ի սկզբանե եղել է անհնար: «Զայք» թերթի չգործելու (չհրապարակվելու) վերաբերյալ ցանցային լրատվամիջոցներում առկա են եղել մի շարք հրապարակումներ, մասնավորապես՝ Զետք online-ի 2011 թվականի հունիսի 9-ի «Զգործող թերթի լրագրողի դեմ հայց» հոդվածը: Բացի այդ, դատարանն ուներ որևէ իրավաբանական անձի, առավել ևս գործով պատասխանողներից մեկի՝ «Զայք» թերթի խմբագրության գործունեության հետ կապված պարզաբանումներ ստանալու այլ միջոցներ:

Զետևաբար, **Խորհուրդը գտնում է**, որ «Զայք» թերթի չգործելու վերաբերյալ դատարանը տեղեկացվելու հնարավորություն ունեցել է, սակայն չգործող (չհրապարակվող) թերթում հերքման պահանջի վերաբերյալ գործողություն կատարելու վճռով պատասխանողին, ըստ էության, պարտավորեցրել է կատարել այնպիսի գործողություն, որն անհնարին է եղել կատարել: Ուստի, ժամկետն անցած չլինելու դեպքում, դատարանը պարտավոր էր դե-

կավարվելով ԶՅ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ լրացուցիչ որոշմամբ նշել Զայցվորի նախընտրած այն զանգվածային լրատվության միջոցը, որտեղ պատասխանողը պետք է կատարեր Զոդվածի հերքման պահանջը:

Զաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գալիս է հետևյալ եզրահանգման.

- «Զայք» թերթի չհրապարակվելու վերաբերյալ դատարանը տեղեկացվելու հնարավորություն ունեցել է, սակայն պատասխանողին պարտավորեցրել է կատարել այնպիսի գործողություն, որն անհնար է եղել կատարել:
- Ժամկետն անցած չլինելու դեպքում դատարանը պարտավոր էր լրացուցիչ որոշմամբ նշել Զայցվորի նախընտրած այն զանգվածային լրատվության միջոցը, որտեղ պատասխանողը պետք է կատարեր Զոդվածի հերքումը:
- Նման հանգամանքներում խախտվել և շարունակում է խախտվել հայցվորի՝ Սահմանադրության 19-րդ հոդվածով սահմանված դատարան դիմելու իրավունքը, քանի որ բարենպաստ դատական ակտի կատարման անհնարինությունը նույնն է, ինչ անձին դատարան դիմելու իրավունքից զրկելը :

Տեղեկատվական վեճերի խորհուրդ

Շուշան Դոյրոյան (Խորհրդի քարտուղար) - *Տեղեկատվության ազատության կենտրոնի նախագահ*

Մանանա Ասլամազյան - «Լրատվության այլընտրանքային ռեսուրսներ» ծրագրի տնօրեն

Բորիս Նավասարդյան – Երևանի մամուլի ակումբի նախագահ

Արամ Աբրահամյան - «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

Արա Ղազարյան - «Արնի Քնսալթ» փաստաբանական գրասենյակի փոխտնօրեն

ՏՎԽ-ի կարծիքը Տիգրան Ուրիխանյանն ընդդեմ Էդգար Բարսեղյանի դատական գործի վերաբերյալ

2013 թվականի մարտի 25-ին Տեղեկատվական վեճերի խորհուրդը հրապարակել է իր կարծիքը ՀՀ պատգամավոր Տիգրան Ուրիխանյանն ընդդեմ բլոգգեր Էդգար Բարսեղյանի դատական գործի վերաբերյալ:

1. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

2012 թվականի հոկտեմբերի 26-ին «Amore» հայ-իտալական հոլդինգը Հայաստանի Հանրապետությունում Իտալիայի Հանրապետության դեսպանության աջակցությամբ կազմակերպել է «Style Screen» ամենամյա մրցանակաբաշխությունը, որում «Տարվա ոճային քաղաքական գործիչ» անվանակարգում հաղթող է ճանաչվել Աժ պատգամավոր Տիգրան Ուրիխանյանը: Ի պատասխան, բլոգգեր Էդգար Բարսեղյանը www.demotivator.am կայքում տեղադրել է Տիգրան Ուրիխանյանի լուսանկարը՝ պատկերված մանեքենուի կնոջ կիսամերկ մարմնով: Իր արարքը Էդգար Բարսեղյանը պատճառաբանել է հետևյալ կերպ.

«Իմ սուբյեկտիվ կարծիքն է, որ մեր երկրում, որն ունի բազմաթիվ չլուծված խնդիրներ, պատգամավորը, որը առաջին շարքերում պետք է լինի այդ խնդիրների դեմ պայքարելու համար, ժամանակ է ծախսում ոճային երեւալու, դրա մասին մամուլի հաղորդագրություններ ուղարկելու վրա: Եվ քանի որ խոսքը ոճի, մոդայի ոլորտի մասին է, որն ինձ մոտ առաջին հերթին կնոջ հետ է ասոցացվում, ես կնոջ մարմնով պատկերեցի եւ չեմ կարծում, որ կնոջ հետ համեմատելը վիրավորական է» (<http://media.am/MP-sues-blogger>):

Ի պատասխան, Տիգրան Ուրիխանյանը հանդես է եկել հետևյալ հայտարարությամբ.

«Եթե բլոգգերի կարծիքով դա վիրավորանք չէ, ուրեմն այսուհետ իր եւ իր մերձավոր բարեկամների դիմապատկերները կիսամերկ մանեքենուիների մարմիններին մոտաժված կտեսնի տարբեր տեղերում, այդ ժամանակ կփորձեն լսել նրա կարծիքը՝ վիրավորանք է դա, թե՞ ոչ: Ես բազմաթիվ այլ զբաղմունքներ ունեմ եւ նկարներ պատրաստելով չեմ զբաղվում, բայց վստահ եմ? բոլոր այն մարդիկ, ովքեր շատ լավ

հասկանում են՝ ինչ է տեղի ունենում, համապատասխան գործողություններ կիրականացնեն այդ համատեքստում» (<http://media.am/MP-sues-blogger>):

21/11/2012թ.-ին Տիգրան Ուրիխանյանը դիմել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Էդգար Բարսեղյանի: Դատարանից խնդրել է սահմանել, որ վիճահարույց լուսանկարով պատասխանողը արատավորել է իր պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը և խնդրել է պարտավորեցնել հրապարակամորեն ներողություն խնդրել, բռնագանձել 1,500,000 դրամ վիրավորանքի և դատական ծախսերի դիմաց (Ըստ www.datalex.am դատական տեղեկատվական համակարգի՝ 3/22/2013թ. դրությամբ), ինչպես նաև www.demotivator.am և www.blognews.am կայքերից ու սոցիալական ցանցերից հեռացնել վիճահարույց լուսանկարը:

27/12/2012թ.-ին հայցվորը միջնորդությամբ դիմել է դատարանին, խնդրելով կիրառել հայցվի ապահովման միջոց և արգելել պատասխանողին համացանցի միջոցով տարածել իր պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը արատավորող որևէ նյութ, այդ թվում վերը նշված լուսանկարը, ինչպես նաև 1,500.000 դրամի չափով արգելանք դնել պատասխանողին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա:

Դատարանը միջնորդությունը բավարարել է մասնակիորեն և որոշել է արգելել պատասխանողին համացանցի միջոցով տարածել հայցվորի պատիվը, արժանապատվությունը ու գործարար համբավը արատավորող որևէ նյութ, այդ թվում վիճահարույց լուսանկարը: Դատարանը մերժել է գույքի և դրամական միջոցների վրա հայցագրի չափով արգելանք դնելու պահանջը՝ պատճառաբանելով, որ պահանջը հիմնավոր չէ, քանի որ չի հիմնավորվել դրա անհ-

րաժեշտությունը: Ներկայումս դատական վարույթը նախնական դատական քննության փուլում է:

2. ԵՋՐԱՅԱՆՊԻՍ

Վիճահարույց լուսանկարը պատկանում է քաղաքական երգիծանքի ժանրին: Երգիծանքը գեղարվեստական խոսքի տեսակ է, ինչպես նաև սոցիալական արտահայտչամիջոց, որն իրեն բնորոշ բոլոր չափազանցություններով, իրականությունը աղավաղված ներկայացնելու, հրահրելու ու սուր քննադատության ենթարկելու հատկանիշներով գտնվում է ազատ խոսքի պաշտպանության տակ (Vereinigung Bildender Künstler-ն ընդդեմ Ավստրիայի, թիվ 68354/01, 25/01/2007թ., «33»): Հետևաբար, խնդրո առարկա հարցը կայանում ոչ թե նրանում, թե արդյոք լուսանկարը ինքնին, միջավայրից դուրս վիրավորական էր, թե ոչ, այլ, թե արդյոք հեղինակին հաջողվել է իր խոսքը ողջամտորեն փոխհավասարակշռել այլոց իրավունքների՝ տվյալ դեպքում քննադատության թիրախ անձնավորության արժանապատվության հարգման իրավունքի հետ: Դա որոշելու համար Խորհուրդը հաշվի է առնելու բոլոր գործոնները, որոնք միասին կազմում են խնդրո առարկա տեղեկատվության համատեքստը:

Վիճահարույց լուսանկարով հեղինակը արտահայտել իր բողոքը քաղաքական գործչի կոնկրետ գործողության նկատմամբ: Դա քննադատություն էր, որն ուղղված էր հայցվորի՝ որպես քաղաքական գործչի գործունեությանը, այլ ոչ թե նրա անձնական կյանքին: Հետևաբար, լուսանկարի պատրաստելն ու տարածելը ինքնանպատակ չէր, դա քաղաքացիական ակտիվիստի կողմից քաղաքական գործչի կոնկրետ արարքին տրված յուրահատուկ գնահատական-դատողություն էր:

Գնահատական-դատողության արտահայտումը կարող է պաշտպանվել օրենքով, եթե հիմնված է որոշակի փաստական հիմքերի վրա: Տվյալ դեպքում այդպիսի փաստական հիմքեր էին «Տարվա ոճային քաղաքական գործիչ» մրցանակաբաշխությանը հայցվորի կողմից ներկայանալու, մրցանակը ստանալու և հարցազրույց տալու հանրահայտ հանգամանքները:

Ի հավելումն, պատասխանողի անձը նույնպես գործոն է, որը պետք է հաշվի առնել: Տվյալ դեպքում պատասխանողը քաղաքացիական ակտի-

վիստ է ու բլոգեր, ով իրականացնում է ,հասարակական վերահսկող օղակի (watchdog) իր գործառույթը (Սահմանադրական դատարանի ՍԴՈ-997 որոշում, էջ 22), որը բխում է ժողովրդավարական հասարակության շահից, որով սահմանափակվում է քաղաքացիական իրավունքները սահմանափակու իշխանությունների հայեցողության շրջանակը (Սահմանադրական դատարանի ՍԴՈ-997 որոշում, էջ 22):

Հայցվորի անձը նույնպես գործոն է, որը պետք է հաշվի առնել: Տվյալ դեպքում հայցվորը քաղաքական գործիչ է, ով աչքի է ընկնում իր լայն հրապարակային գործունեությամբ: Նման հանգամանքներում քաղաքական գործիչների նկատմամբ թուլալատրելի քննադատության շրջանակներն առավել լայն է և նրանք պետք է դրսևորեն առավել մեծ հանդուրժողականություն: Դա բխում է ՀՀ Սահմանադրության 1-ին, 2-րդ և 5-րդ հոդվածների սահմանադրաիրավական ընդհանուր բովանդակությունից, քանի որ ժողովրդաիշխանությունն իրականացվում է նաև հանրային ծառայության միջոցով, և այդ ծառայությունը կրող անձանց հանրային և մասնավոր վարքագիծն օբյեկտիվորեն կարող է հասարակական քննարկման առարկա դառնալ (ՍԴՈ-997 որոշում, էջ 20):

Եվ վերջապես, խնդիրը անհրաժեշտ է դիտարկել նաև բարոյականության տեսանկյունից՝ Սարգու իրավունքների եվրոպական կոմիտեիցայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի ներքո, քանի որ խոսքի ազատությունը սահմանափակող հիմքերի շրջանակներում «բարոյականության պաշտպանության» և «այլոց իրավունքների պաշտպանության» երկու իրավաչափ նպատակների միջև առկա է բնական կապ: Տվյալ դեպքում բլոգերը պատասխանողի լուսանկարը պատկերել է մանեքենուի կիսամերկ մարմնի տեսքով, որը, ըստ մեր հասարակությունում ձևավորված բարոյական նորմերի ու արժեհամակարգի, անձին հրապարակավ ներկայացնելու անպարկեշտ եղանակ է:

Հաշվի առնելով վերը նշված բոլոր գործոնները, և հատկապես քաղաքական խոսքի կարևորությունը հասարակական հարաբերություններում, **Խորհուրդը գտնում է**, որ տվյալ դեպքում, այնուամենայնիվ, անհրաժեշտ է դրսևորել հանդուրժողականություն բլոգերի նախընտրած արտահայտչամեթոդի նկատմամբ, որը թեև հագեցած է ծայրահե-

ղությանը, սակայն ուղղված է եղել ոչ թե քաղաքական գործչի անձնական կյանքին, այլ նրա հասարակական գործունեությանը:

Ինչ վերաբերում է գումարային պահանջին, Խորհուրդը կրկին նշում է, որ քաղաքական գործիչները հանրային քննարկման նշանակության փաստերի շրջանակներում բերված բողոքների առնչությամբ ցանկալի է, որպեսզի ձեռնպահ մնան գումարային պահանջներ ներկայացնելուց: Եթե դատարանը բավարարի հայցապահանջը, Խորհուրդը կարծում է, որ իրավունքի խախտման փաստի ճանաչումը ինքնին կարող է դիտվել որպես արդարացի փոխատուցման բավարար եղանակ:

Գույքի ապահովման միջոց կիրառելու մասին դատարանի որոշման առնչությամբ Խորհուրդը գտնում է, որ այն կայացվել է օրենքով սահմանված կարգով, հետապնդում է իրավաչափ նպատակ և պահպանվել է միջոցների ընտրության համաչափության սկզբունքը, քանի որ ընտրվել է իրավունքները սահմանափակող նվազ միջամտող բնույթի եղանակը, որը չի խոչընդոտում պատասխանողի գործունեությունը:

Տեղեկատվական վեճերի խորհուրդ

Շուշան Դոյրոյան (Խորհրդի քարտուղար) - Տեղեկատվության ազատության կենտրոնի նախագահ

Մանանա Ասլամազյան - «Լրատվության այլընտրանքային ռեսուրսներ» ծրագրի տնօրեն

Բորիս Նավասարդյան - Երևանի մամուլի ակումբի նախագահ

Արամ Աբրահամյան - «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

Արա Ղազարյան - «Արնի Քնսալթ» փաստաբանական գրասենյակի փոխտնօրեն

ՍԵՎ ՑՈՒՑԱԿ

Այս անձինք խախտել են ճարտարագիտական տեղեկատվություն ստանալու իրավունքը 2013թվականի 1-ին եռամսյակի ընթացքում:

Թեև Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2013թ.-ի 1-ին եռամսյակում տեղեկություն տնօրինող տարբեր մարմինների ուղարկել է տեղեկություն ստանալու 60 հարցում, ապա՝ նաև կրկնակի հարցումներ, սակայն տեղեկություն տնօրինող բոլոր մարմիններն արձագանքել են ԻԱԿ-ի հարցումներին՝ առնվազն կրկնակի հարցմանը պատասխան տրամադրելով: Հարկ է սակայն նշել, որ սա պատասխան գրությունների որակական ցուցանիշ չէ. դեռևս շատ են թերի պատասխանները եւ անհիմն պատասխանները, որոնք, սակայն, սեւ ցուցակում չեն արտացոլվում:

- **Հովիկ Աբրահամյան** - ՀՀ Ազգային ժողովի նախագահ

2012թ.-ի նոյեմբերի 22-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն ստանալու հարցմամբ դիմել էր ՀՀ Ազգային ժողովին՝ խնդրելով տրամադրել ՀՀ ԱԺ նախագահի՝ 2012թ.-ի 1-ին կիսամյակի կարգադրությունների պատճենները: ԱԺ-ն տրամադրել էր թերի պատասխան՝ ըստ հերթական համարների չներկայացնելով որոշ կարգադրությունների պատճեններ: 2013թ.-ի մարտի 7-ին ԻԱԿ-ը կրկնակի հարցմամբ դիմեց ԱԺ-ին՝ խնդրելով տրամադրել պակասող կարգադրությունները: Սակայն, ԱԺ-ն տրամադրեց անհիմն մերժում՝ պատճառաբանելով, որ տվյալ կարգադրությունները պարունակում են աշխատողի վերաբերյալ անձնական տվյալներ:

BLACK LIST-2013, 1st Quarter

Though in the 1st quarter of the 2013 the Freedom of Information Centre sent 60 information requests, and then double requests to the different information holders, but all the information holders responded to the FOICA's requests, at least to the FOICA's double requests. It should be noted, that this is not a qualitative indicator of the responses: there are still a lot of Incomplete and unjustified responses, which, however, are not reflected in the black list.

- **Mr. Hovik Abrahamyan** - Speaker of the RA National Assembly

On November 22, 2012, the Freedom of Information Center sent an information request to the RA National Assembly, asking to provide provide the copies of the instructions by the President of the RA NA. The NA provided an incomplete answer: 12 copies of the instructions by the Chairman of the RA NA were not provided. On March 7, 2013, the FOICA sent another request to the RA National Assembly asking to provide the missing 12 copies of the instructions. But NA provided an unjustified refusal, claiming that the instructions contain the NA employee's personal data.

The FOICA filed a lawsuit against the RA National Assembly

On April 8, 2013 FOICA filed a suit at the RA Administrative Court against the RA National Assembly, appealing its refusal to the FOICA's information request. FOICA has asked the Court to recognize the fact of violation of the right of FOICA to receive information and oblige the RA National Assembly to provide the requested information.

